



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ

ԵՐԳԱՐԱՆԸ

ՃԱԻԱՔԱԾՈՅ

ՍԱՆԿԱՊԱՐՏԻԶԻ ԵՐԳԵՐՈՒ

ԳՍՍԱԳԻՐԲ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Մանկապարտեզներու, Ծագկոցներու,
Նախապատրաստական կարգերու եւ
Տարրական Իւստրիպացիի համար :

ՀԱՒԱՔԵՑ

Յ. Գ. ՓԱՆԱԳԱՇԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԳՐԱՑՈՒՆ Գ. ՊԱՂՏԱՑԻՆԵԱՆ

Սուրբան Համաձք փողոց, քիւ 11

1904

ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Պատասխան է հետեւեալ նոր Դասագրքերն, մանկավարժական նորագոյն մեթոսներու համաձայն, դիւրացնելու համար Ուսումն. Խորհրդոյ Կրթական Ծրագրին գործադրութիւնը.

1. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՅՔ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ. ԱՅԲԲԵՆԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՐԱՆ: Բնական եւ դիւրագոյն մեթոս կարգալ գրելու: Գիր եւ ընթերցում հասկնալու: Խոշորագիր 1 1/2 Դրշ.

2. ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ. Դասագիրք Ընթերցանութեան եւ բնական ու բնապատեան կախնական ծանօթութեանց 3 Դրշ.

3. ԱՅԲԲԵՆԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՐԱՆ ՅՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ. Դիւրուայն մեթոսով: Տղայոց եւ չափանասնէրու համար 1 1/2 Դրշ.

4. ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ԵՐԳԱՐԱՆԸ 3 Դրշ.

5. ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ. Պատկերազարդ. Յասակագծերով եւ Աշխարհացոյցերով: Մանկապարտեզ-Ծաղկոցներու, Կախապատ. կարգերու եւ Տարրական Դասընթացի Ա. սարուց համար: Դ. տիպ հիմնովի թարեփոխում 2 1/2 Դրշ.

6. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ Տարրական Դասընթաց (Ա. եւ Բ. սարի). Պատկերներով եւ Աշխարհացոյցերով. Բ. Տարագրութիւն թարեփոխում 2 1/2 Դրշ.

7. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ Միջին Դասընթաց (Հրասարակելի):

8. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ Բարձրագոյն Դասընթաց. Պատկերազարդ. Բնական եւ Բարդական. Ճոխ ծանօթութիւն աշխարհի հիւնդ մասանց Բնական եւ Ճարտարագործական արտադրութեանց եւ Վաճառականութեան փրայ. Մեծադիր. Երես 200 6 Դրշ.

ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ

Ե Ր Գ Ա Ր Ա Ն Ը

Հ Ա Ի Ա Ք Ա Ծ Ո Յ

ՄԱՆԿԱՊԱՐՏԻՋԻ ԵՐԳԵՐՈՒ

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

Ը Ն Թ Ե Ր Յ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Մանկապարտեզներու, Ծաղկոցներու, Կախապատեան կարգերու եւ Տարրական Դասընթացի համար:

Հ Ա Ի Ա Ք Ե Յ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Վ. ՄԻՆԱՍԵԱՆ
Գ Ր Ա Տ Ո Ւ Ն Գ. ՊԱՂՏԱՏՆԵԱՆ
Սուրբան Համալ փողոց, բիւ 14

ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ

Ե Ր Ք Ա Ր Ա Ն Ը

1. ԱՌԱԻՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Փառք Ստեղծողիս որ քուն անուշակ
Տուաւ իմ աչացս, արթնցող հիմակ .
Ծագեց իմ վրաս կարմիր արեւիկ,
Ինձ քաղցրիկ բարեւ տուաւ իմ մայրիկ .
Հայրս համբուրելով առաւ զիս իւր գերկ,
Ինչպէս որ հովիւ կը գգուէ զգառնիկ :
Աստուած իմ եւ Տէր, մինչեւ այս կէտիս
Դու ես պատրաստեր իմ ամէն բարիս .
Տո՛ւր որ անմեղիկ մնամ մշտական,
Նատին սիրելի, քեզ հաճոյական :

2. ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՕԹՔ

Տէր իմ Աստուած, Տէր բարերար,
Դու պահպանէ զիս այս գիշեր .
Տուր հօրս եւ մօրս կեանք երկար
Եւ երջանիկ հանգիստ օրեր :

Քո սուրբ հրեշտակդ մեր մօտէն
 Ձի հեռանայ ամենեւին,
 Եւ պահէ միշտ փորձանքներէն,
 Արթնցընէ զըւարթագին :

3. ԽԱՅՈՒՆԻԿ ՀԱԻ

Խաթունիկ հաւ
 Բունկալին մէջ
 Թարմ ու շատ լաւ
 Հաւկիթ մ'ածեց .
 Կըտ, կըտ, կըտ, կըտ, կըտ, տակ .
 Կըտ, կըտ, կըտ, կըտ, կըտ,
 կըտ, կըտ, տակ :
 Ժիր տան տիկին
 Կուգայ մինակ
 Փնտուել չորս դին
 Այս ձուն ճերմակ :
 Կըտ, կըտ, կըտ, եւայլն :
 Այս թարմ ու լաւ
 Չուն աղուորիկ
 Խնճոյք մ'է, հա՛ւ,
 Չայն քեզ պարտինք :
 Կըտ, կըտ, կըտ, եւայլն :

4. ՊԱՌԱՒՆ ՈՒ ԱՅԾԸ

Պառան այժ մ'ունէր,
 Փոքրիկ, սիրուն այժ .
 Ինքն անով կ'ապրէր,
 Աղքատ մնացած .
 Խեղճուկ, մինակ,
 Աղքատ մնացած :
 Իւր այժիկն օր մի
 Նա դաշտը տարաւ,
 Ի ծաղկած հովտի
 Արածել տուաւ .
 Կուշա կուշա, կուշա կուշա
 Արածել տուաւ :
 Մարտ ամսի վերջն էր,
 Խիտ քամի փչեց,
 Պառաւի աչքէն
 Այծը հալածեց .
 Ափս՛ս, ա՛խ, ափս՛ս,
 Այծը հալածեց :
 Պառան էր նստած
 Փունջ խտոր ձեռին,
 Այծը կը կանչէր
 Չայնով արամաղին,
 — «Ե՛կ, ե՛կ, ե՛կ, եկ»,
 Չայնով արամաղին :

5. Յ Ռ Չ Ն Ի Կ Ը

Թռչնիկն, ահա՛, դէպ ինձ կու գայ,
 Ուզիս վըրայ կը նստի,
 Կոցով բռնած մի նամակիկ,
 Հօրմէս ողջոյն կը բերէ ։

Սիրուն թռչնակ, դարձի՛ր գընա՛,
 Բարեւիկս տար եւ համբոյրս,
 Ես չեմ կարող քեզ ընկերիլ,
 Դեռ դասըս չեմ պատրաստած ։

6. Ն Ա Պ Ա Ս Տ Ա Կ

Մի՛ վաղեր այդչափ արագ,
 Իմ աղւորիկ նապաստակ ։
 Շատ պզտիկ ես տակաւին,
 Թաթիկներդ կը յոգնին ։

Ես քեզ համար հաց բերեմ՝,
 Շաքարեղէն կերցնեմ,
 Մինչեւ մեծնաս զօրանաս,
 Յատկերով քովըս խաղաս ։

7. Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

Ձե՞ս ուղեր դուն,
 Մանուկ արթո՛ւն,
 Շատ բաներ գիտնալ,
 Եւ դըրել կարգալ,
 Կըրթըւած ըլլալ ։
 Ըսուիլ գիտուն ։

Այբբենարա՛ն,
 Ամէն ուսման՝
 Ըսկիզբն ա՛յն է,
 Սորվէ՛ նախ Ա. է (1) .
 Ը. Ի. Ո. Օ. Ե ։
 Ո՞ր է մի ձայն ։

Յետոյ կարգով
 Դիր քովէ քով
 Բը, Գը, Դը, Զը, Թը (2)
 Ժը, Լը, Խը, Ծը, Կը,
 Հը, Զը, Դը, Ճը, Մը,
 Միշտ կրկնելով ։

(1) Այս ձայնաւորներուն ձայները միայն արտասանելու է, եւ ո՛չ անունները ։

(2) Եւ (3) Գրուածին պէս հնչել, այսինքն Բը, Գը, Դը եւ ո՛չ Բէն, Դիմ, Դա, եւայլն ։

Այսպէս այնպէս,
 Ամբողջապէս,
 Յը, Նը, Եը, Ձը, Պը⁽³⁾,
 Զը, Ռը, Սը, Վը, Տը,
 Բը, Յը, Փը, Բը, Ֆը,
 Վերջացընես:

8. Տ Ա Ն Տ Ա Ն

Տա՛ն տա՛ն, պէպէք, տա՛ն տա նա,
 Տան տան, մինչեւ քրնանայ.
 Օ՛ր օ՛ր չուզեր, խեղճ կ'ընէ,
 Սիրտ պէտք է որ դիմանայ:

Ծա՛ փիկ, ծա՛ փիկ, ծիրանի,
 Կարմիր խընձոր կըմանի,
 Ոսկի դեղձան մագերն ալ
 Հովը թեւ թեւ կը տանի:

Հո՛ փ, հո՛ փ, սըզա՛ս, հոփպալայ,
 Հո՛ փ, հո՛ փ ցատկէ որ չի լայ.
 Խնդու՛մ դէմքին վարդ բացուի,
 Ամէն բարիք իրն ըլլայ:

Թօմպո՛ւլ, թօմպո՛ւլ, պըտըտիկ,
 Ի՛մ գառնուկս է մէկ հատիկ.

Վազը քունէն արթըննայ,
 Ծարժէ թեւերն ու ատաիկ:

Եկո՛ւ, հայրի՛կ, հոպպա տար,
 Զէ՛, չէ՛, մի՛ գար, չե՛մ իտար.
 Անուշ մանչըս քուն ունի,
 Քիչ մըն ալ մեծնայ, հապա տար:

Այն ի՛նչ աղւոր հայրիկ է,
 Մանչըս ինձի կը ձգէ.
 Խըփէ աչուիդ անուշիկ,
 Տա՛ն տա՛ն, ծափիկ, հերիք է:

Աչուկ պա՛հ պա՛հ ու օ՛ր օ՛ր,
 Սիրով մեծցիր օրէ օր.
 Ես հայրիկին քով նըստիմ՝,
 Երգե՛մ երգեր նորէ նոր:

Ահա՛ արլաս տատա՛նի,
 Հոգի կուտայ տանտանի.
 Դըրի երեսն երեսիս,
 Ահա՛ քունը կը տանի:

9. Օ Ր Օ Ր

Օր օր, ի՛մ մանկիկ,
 Քընացիր մըչիկ մըչիկ.
 Աղւոր ճերմակ լուսընկան
 Յաթեց օրանիդ վըրան.
 Օր օր, ի՛մ մանկիկ,
 Քընացիր մըչիկ մըչիկ:

Օր օր, իմ թռչնիկ,
 Գնացիր մշիկ մշիկ.
 Աղւոր ճերմակ լուսնական
 Յաթեց կակուղ բոյնիդ վրան.
 Օր օր իմ թռչնիկ,
 Գնացիր մշիկ մշիկ:

Օր օր, իմ ծաղիկ,
 Գնացիր մշիկ մշիկ.
 Աղւոր ճերմակ լուսնական
 Յաթեց ցօղունիդ վրան.
 Օր օր, իմ ծաղիկ,
 Գնացիր մշիկ մշիկ:

10. Ա Ք Ա Ղ Ա Ղ

Ի ու ինձ ասա՛, աքաղա՛ղ,
 Ոսկի կատարիդ մատաղ,
 Կարմիր մօրուքիդ մատաղ,
 Ինչո՞ւ շուտ շուտ կ'արթննաս,
 Բարձր ձայնով կը պոռաս,
 Բակի դուռը կը թառխ.
 Քաղցր քունս խռովելո՞ւ,
 Օրս անհանդի՞ստ ընելու:

11. Ա Ղ Օ Յ Ք Ա Ռ Ա Ի Օ Տ Ե Ա Ն

Փառք քեզ, Աստուած իմ, որ զիս այսօր ալ
 Արժանի ըրիր Մանկապարտէզ գալ.
 Շնորհքիդ ցօղէն, Տէ՛ր, կաթէ՛ իմ վրայ,
 Որ հողիս անբիծ, սիրաս սուրբ ըլլայ:

Լոյս սուր, Տէ՛ր, մտքիս, զգացում՝ սրտիս,
 Արեւէդ՝ արեւ անոյշ ծնողքիս.
 Համբերութիւն սուր բարի ուսուցչիս.
 Քուկին զաւակդ եմ, ո՛վ Տէր, օրհնէ՛ զիս:

12. Դ Պ Ր Ո Յ Ը

Կանուխ առաւօտուն,
 Ճիշդ արշալուսին,
 Ամէնքս ուրախ ժպտուն՝
 Հոս ենք միասին.
 Լա, լա, լա, լա, լա,
 Լա, լա, լա, լա, լա,
 Լա, լա, լա, լա, լա, լա, լա:

Վարդազոյն գէր այտեր
 Ունինք դէմք սիրուն,
 Կունկընդբէ վերէն Տէր
 Մեր քաղցր երգերուն.
 Լա, լա, լա, լա, եւայլն:

Քաղաքը մի տղայ

Պէտք է շարունակ

Շատ երգէ ու խաղայ

Թընչնոյ նմանակ .

Լա, լա, լա, լա, եւայլն :

Վարժարանին տայ սէր,

Արթուն, խելացի,

Միշտ սովորի իր դասեր

Աւանց ողբ լացի .

Լա, լա, լա, լա, եւայլն :

13. ԶԱՂԱՅՔ (ԽԱՂ)

Մեր գիւղին մէջ՝ հըսկայ

Ջաղացք մը կը դառնայ .

Միակերպ իր ժըխոր

Կը լրտուի ամէն օր :

Ան դարի կամ՝ ցորեն

Շարունակ աղալէն,

Կը գոռայ օրն ի բուն,

Ջայրագին աննկուն :

Ջաղացպանն ու իր կին

Շատ բարի սիրտ մ'ունին .

Ամէն մարդ անոնց քով

Կը գանէ սէր գորով :

Տէր ու կին՝ աղքատաց

Կուտան միշտ առատ հաց :

Ջաղացքին մէջ, իրա՛ւ,

Ո՛չ երբէք կան վիշտ, ցաւ .

Տղայք հան թեւ ի թեւ

Քայլերով շատ թեթեւ

Առտուանց կանուխէն

Կը խաղան ու կ'երգեն :

14. ՕՐ ՕՐ

Քնացի՛ր, տղաս, որբանիդ մէջ մըլիկ, մըլիկ,
Քովդ է մայրիկդ, երգեր կ'ըսէ քեզ անուշիկ .

Օր օր, օր օր, գոցէ աչքերդ, հրեշտակս աղւորիկ,
Օր օր օր օր, օր օր օր օր, օր օր օր օր :

Որո՞ւն դառնուին՝ ամէն իրիկուն տալով պաջիկ,
Ոսկի թոփիկ, սանկ խելօրիկ կ'ընէ պաճիկ .

Օր օր օր օր, գոցէ՛ աչքերդ, դառնուկս աղւոր,
Օր օր օր օր, օր օր օր օր, օր օր օր օր :

Որո՞ւն ձագուկն՝ այս գէս հլու եւ հանդարտիկ՝
Որբանին մէջ իր մայրիկին կ'ընէ մրտիկ .

Օր օր օր օր, գոցէ՛ աչքերդ, ձագուկս աղւոր,
Օր օր օր օր, օր օր օր օր, օր օր օր օր :

Քնացի՛ր, տղա՛ս, որ մայրիկդ ալ քնանայ, հոգի՛ս .
Աստուածամայր, անոյշ քան տաւր իմ տատրակիս .

Օր օր օր օր, գոցէ՛ աչքերդ, խուշիկս աղւոր,
Օր օր օր օր, օր օր օր օր, օր օր օր օր :

Քնացի՛ր, աղա՛ս, ա՛լ ուչ է, ուչ, զիշերն անցաւ,
 Կը մաղթեմ՝ քեզ վարդ երազներ, զարթոնք մ'անցաւ .
 Կիշեր բարի, օր օր օր օր, աղուորս, օր օր,
 Օր օր օր օր, օր օր օր օր, օր օր օր օր :

15. ԽՈՒՄԲ ՓՈՔՐԻԿ ԵՐԱԺՇՏԱՅ

Օ՛ն, եղբարք, առնենք

Նուագարաննիս,

Կարգաւ մենք զարներ

Սիրուն երգերնիս,

Փա՛ղցրիկ, քա՛ղցրիկ

Սիրուն երգերնիս :

Թ՛մբուկ մը ունինք,

Շատ գեղեցիկ է,

Քանի կը զարներ,

Նա ձայն կը հանէ .

Թը՛մ, թը՛մ, թը՛մ, թը՛մ,

Նա ձայն կը հանէ :

Փղքրիկ ջութակնիս

Շատ լաւ լարած ենք,

Առնենք աղեղնիս,

Երգենք ու ամենք .

Պի՛, պի՛, պի՛, պի՛,

Երգենք ու ամենք :

Մեր սիրուն տաւիղ,

Չենք մոռնար քեզի,

Թո՛ղ լինի շաւիղ

Չայնիկդ մեզի :

Տի՛, տի՛, տի՛, տի՛ :

Չայնիկդ մեզի :

Տեսէ՛ք մեր սրինգ,

Համր չի մնար .

Մենք զանի առինք,

Սուլբլու համար .

Տի՛ւ, տի՛ւ, տի՛ւ, տի՛ւ,

Սուլբլու համար :

Ծնծղայն զնծալով

Կ'առնենք ձեռքերնիս,

Ուժով զարներով

Կ'երգենք ամենքնիս .

Ծի՛ն, ծի՛ն, ծի՛ն, ծի՛ն,

Կ'երգենք ամենքնիս :

Եկէ՛ք, եղբայրներ,

Դաշնակի վրայ

Շարժենք մեր մասներ,

Թո՛ղ լաւ մը գոռայ .

Տօ, ֆա, ըէ, սի,

Թո՛ղ լաւ մը գոռայ :

16. Թ Ը Ս Տ Ը Լ Ի Կ Ե Մ

Թըստըլիկ եմ, պըզտըլիկ եմ,
Ճամբայ չիյտեմ, ո՞ւր երթամ .
Տեսես ազբար, շատ պզտիկ եմ,
Մեծնամ, հապա կը կարդամ :

Թըստըլիկ եմ, պըզտըլիկ եմ,
Ճամբայ չիյտեմ, ո՞ւր երթամ .
Վարպետ տուտուն կըամիթ կուտայ,
Գիրկն որ ելլամ, պաչիկ տամ :

Թըստըլիկ եմ, պըզտըլիկ եմ,
Ճամբայ չիյտեմ, ո՞ւր երթամ .
Գուռ գըրացի, վըկայ եղէք,
Պահւըտեղու վար կերթամ :

Թըստըլիկ եմ, պըզտըլիկ եմ,
Ճամբայ չիյտեմ, ո՞ւր երթամ .
Թաթիկ ապիտ, անո՛ւշ մայրիկ,
Մանկապարտէշ ես կ'երթամ :

17. Փ Ի Ս Ի Կ

Պըզտիկ կատուն արթընցեր,
Ու իր ախանջն է տընկեր .
Կը գիտէ չորս գին նաեւ,
Բարեւ, փխիկ, քեզ բարեւ, բարեւ :

Գլուխդ քուկին թաթիկով,
Շըսկըռտէ դուն նազանքով .
Ու սիրածիդ մօտն իսկոյն,
Եկուր, փխիկ, եկուր դուն իսկոյն :

18. Գ Ո Ր Տ Ն Ո Ւ Թ Ո Չ Ո Ւ Ն Ը

Տեսէ՛ք, ջուրէն գորտ մը ելաւ,
Գուա, գուա, կը կըրկըւայ .
Ան տեսաւ մեզ, մէջը փախաւ,
Շուտ շուտ շուտ կը լողայ :

Իր բոյնին մէջ երգէ թռչուն,
Ճիււ, ճիււ, ճիււ, ճիււ, ճիււ, ճիււ,
Չայն մի հանէք, չառնէ իր չուն,
Այլ երգէ ճիււ, ճիււ, ճիււ, ճիււ :

19. Բ Ա Ր Ի Տ Ղ Ա Ն

Սիրուն հայր ու մայր,
Մաղթեմ՝ ձեզ համար
Այս կաղնիքին օր
Բարիք բերաւոր :
Գուք բերիք մեզ
Պտուղներ պէս պէս,
Ու մեր տունն ըրիք
Ուրախ երջանիկ :

Դուք որ մեր անձին
 Զոհէք ձեր հոգին,
 Ու մեզ համար միշտ
 Քաղէք ցաւ ու վիշտ:

Թողէ՛ք որ զուարթ
 Լինիմ՝ ձեռքի տակ,
 Առնեմ մէկ պաշիկ,
 Ըսեմ՝ «Շատ ապրիք»:

20. Կ Օ Շ Կ Ա Կ Ա Ր Ը

Փողոցէ մը օր մը անցայ,
 Պատուհանէ մը ներս նայեցայ.
 Կօշիակարը ասեղն առեր,
 Հա կը կարէր, կօշիկ կարէր.
 Ռա բա թաք թիք, թի քա թաք թիք,
 Ահա՛ այսպէս շինէր կօշիկ:

Հերիւններով ծակեր բանար
 Ներբանի վրայ դէպ վեր դէպ վար:
 Ապա փայտէ գամեր գամէր.
 Ահա՛ այսպէս զանոնք գամէր.
 Ռա բա թաք թիք, թի քա թաք թիք,
 Ահա՛ այսպէս շինէր կօշիկ:

Կաղապարին վրայ շարէր
 Կաշեայ փորը ու մեծ կտորներ.
 Ու մեծ թերմիւ ասեղ առեր,
 Հա՛ կը կարէր, կօշիկ կարէր.
 Ռա բա թաք թիք, թի քա թաք թիք,
 Ահա՛ այսպէս շինէր կօշիկ:

21. Ա Ջ Ք Կ Ա Պ Ո Ւ Կ (Խ Ա Ղ)

Երջանիկ ենք եւ ուրախ,
 Երբ մենք խմբով կը խաղանք.
 Օդ յուզեալ է թէ՛ խաղաղ,
 Միշտ կ'ազդէ մեզ նոյն բերկրանք:
 Մեզմէ մին պահուած է,
 Դարձիր գտիր, այն ո՞վ է.
 Պիտի խնդանք ի սրտէ,
 Թէ կարծիքս շիտակ է:

22. Մ Է Ն Մ Է Ն Տ Ա Տ Ի Ս

Մէ՛ն մէ՛ն տատիս, մէ՛ն մէ՛ն տատիս.
 Ո՛վ սրտիս սէր, անո՛ւշ որդիս:
 Թաթիկդ ինձ տուր, իմ մէկ հատիկ,
 Քայէ տեանեմ տոտիկ, տոտիկ.
 Այն ի՞նչ աղւոր տատիս կ'ընէ,
 Չեմ կշտանար, որդեակ, քե՛նէ:

Մէ՛ն մէ՛ն տատիս, մէ՛ն մէ՛ն տատիս .

Ո՛վ սրտիս սէր, անս՛ւշ որդիս :

Զեռքս թո՛ղ տուր, մինա՛կ քալէ ,

Մի՛ սուք առներ հեւհըւալէ .

Մի՛ ճորճրար, մ՛ըներ ախիկ ,

Ապրե՛ս, որգեակ իմ պըտըտիկ :

Մէ՛ն մէ՛ն տատիս, մէ՛ն մէ՛ն տատիս .

Ո՛վ սրտիս սէր, անս՛ւշ որդիս :

Ահա՛ քալեց իմ անուշիկ ,

Տատիս ըրաւ յուշիկ յուշիկ .

Ահա՛ որդիս ըրաւ մէ՛ն մէ՛ն ,

Մուցսյ զնաց հողերս ամէն :

Մէ՛ն մէ՛ն տատիս, մէ՛ն մէ՛ն տատիս .

Ո՛վ սրտիս սէր, անս՛ւշ որդիս :

Բռնե՛մ, բռնե՛մ, հա՛ բռնեցի ,

Զէ՛, չես իյնար, քիչ մը կեցի .

Մօտիկ եկու քիչի՛կ, քիչի՛կ ,

Աչուկներէդ ընեմ պաշիկ :

Մէ՛ն մէ՛ն տատիս, մէ՛ն մէ՛ն տատիս .

Ո՛վ սրտիս սէր, անս՛ւշ որդիս :

Ա՛լ մարդ եղար, ելիր սարի ,

Քեզ չեմ օգնե՛ր առանց պէտքի .

Ասկից ետքը, անուշ որդիս ,

Ինքիր գլխուդ քալել պարտիս :

23. ԵԿԷՔ, ԲԱՐԵԿԱՄՔ

Եկէ՛ք, բարեկա՛մք, եկէ՛ք ,

Արագ արագ վազեցէ՛ք .

Դասի սեղան պատրաստուած ,

Դասադրքերն բերուած .

Ժամանակ է, վազեցէ՛ք ,

Եկէ՛ք, բարեկա՛մք, եկէ՛ք : (Երկու անգամ) :

24. ԾԱՂԿԵՎԱՃԱՌԸ

Պարսիկպանուհին եւ ընկերներ .

Ծաղիկներ կ'ուզէ՛ք ,

Տամ ձեզի, շատ աղւոր են .

Ծաղիկներ կ'ուզէ՛ք ,

Գոյնզգոյն ունիմ, տեսէ՛ք :

Փոքիկ աղջիկներ .

Ընարե՛լ կ'ուզենք մենք՝

Եւ թարմերէն, նորէն .

Ընարե՛լ կ'ուզենք մենք՝

Եւ սիրտերնուս ուղածէն :

Պարսիկպանուհին եւ ընկերներ .

Յաամիկս աղւորիկ ,

Տեսէ՛ք սիրուն վարդին քով .

Յաամիկս աղւորիկ

Վաղը պիտի տայ ծաղիկ :

Փոքրիկ աղջիկները .

Շատ շուտ կը բացուի .
Ուրիշ մը մենք պիտի ընտրենք .
Շատ շուտ կը բացուի ,
Աս չէ ինչ որ մենք կ'ուզենք :

Պարսիզպանուհին եւ ընկերները .

Մենք ունինք նաեւ
Շուշան, նարկիզ եւ մանիշակ,
Մենք ունինք նաեւ
Ոսկի հրանուկ եւ մեխակ :

Փոքրիկ աղջիկները .

Օրուան մ'են ատոնք ,
Շատ շուտ կը թառամին .
Օրուան մ'են ատոնք ,
Որ խիտ կարճ կեանք մ'ունին :

Պարսիզպանուհին եւ ընկերները .

Շեփորակ մ'ահա՛
Տերեւներով փառաւոր .
Շեփորակ մ'ահա՛ ,

Փոքրիկ աղջիկները .

Չանճրոյթ կ'զգանք իրաւ որ :

Պարսիզպանուհին եւ ընկերները

Վաղենիկս ⁽¹⁾ հապա՞ ,
Ասոր ի՞նչ պիտի ըսէք .
Վաղենիկս հապա՞ ,
Կ'ուզէ՞ք :

Փոքրիկ աղջիկները .

Ո՛չ, չնորհակալ ենք :

Պարսիզպանուհին եւ ընկերները .

Վերջին ծաղիկը
Անթառամ է գեղեցիկ .
Վերջին ծաղիկը
Արժէքն ունի բացառիկ :

Փոքրիկ աղջիկները .

Իրաւունք ունիր ,
Էն աղուօրն է, անմահն .
Իրաւունք ունիր ,
Միշտ կայ, միշտ կեանք ունի ան :

25. Ձ Ո Ի Ր Ը

Կեցցէ՛ ջուր, կեցցէ՛ ջուր,
Ջուր զովարար եւ կազդուրիչ .
Կեցցէ՛ ջուր, կեցցէ՛ ջուր,
Իրմով կ'ըլլանք միշտ մարուր :

(1) Այի սեփա. Աշնան ծաղիկ մը՝ գեղին գոյնով :

Պէտք է լըւայ խելոք տըղան
 Դէմքը ու ձեռքերն ամէն օր,
 Զի մարրութեամբ է որ կ'ըլլան
 Տըզաք առողջ եւ աղուոր :

Կեցցէ՛ ջուր, կեցցէ՛ ջուր, եւայլն :

Զուրով կ'եփեն այն խորտիկներ
 Որոնք սնունդ մեզ կուտան,
 Երբ ծարաւ ենք, ջուր զովարեր
 Մեր պապակին՝ է՛ դարման :

Կեցցէ՛ ջուր, կեցցէ՛ ջուր, եւայլն :

Զուրը զարդն է մեր դաշտերուն,
 Երբ լեռներէն իջնելով,
 Կ'ըլլայ վրտակ կամ գետ սողուն,
 Որ կը սուրայ գէպ ի ծով :

Կեցցէ՛ ջուր, կեցցէ՛ ջուր, եւայլն :

Կ'իջնէ վերէն ջինջ ցօղն այգուն,
 Կուտայ ծաղկին պերճանք նոր,
 Եւ անձրեւն ալ մեր արտերուն
 Կուտայ հունձրեր բեզմնաւոր :

Կեցցէ՛ ջուր, կեցցէ՛ ջուր, եւայլն :

26. Զ Բ Օ Ս Ա Ն Ք

Բաւ է մեզ, ընկերներ՝,
 Այսօր շատ ենք կարգացեր,
 Մըտքերնիս է հոգներ,
 Նոյնպէս մեր աչեր .
 Աշխատութեան դադար տանք,
 Երթանք ընել ըզրօսանք :
 Քիչ մը եւս խաղալով,
 Քայլենք երգելով :

Բընութիւն լի՛նջ քաղցրիկ,
 Ժըզիտ ունի գեղեցիկ .
 Տե՛ս սիրուն թիթեռնիկ,
 Թըրթըւայ հեղիկ .
 Օն եւ մենք ալ վազվըղենք,
 Եկէ՛ք մէկտեղ պար բռնենք .
 Պարէն վերջ դասերնիս
 Կ'առնենք ձեռքերնիս :

27. Ժ Ա Մ Ա Ն Ա Ր Ը

Ժամանարք . — Ժամահարն եմ՝ դըզեակին,
 Կը զարնեմ ես թիք թաք,
 Թիք թաք, թիք թաք, կը լսուին
 Երգերս յար զերթ նըւազ :

Պարբ. — Ո՛վ ժամահար, մեզ ըսէ՛ ,
 Հընչիւնով քու յըստակ,
 Ժամն այս պահուն քանի՛ն է .
 Ըրէ՛ թիք թաք, թիք թաք :

Ժամահարբ. — Առաւօտեան ժամն է արդ ,
 Թիք , թաք , թիք , թաք , թիք , թաք ,
 Ժամն ուր կ'երգեն անհանդարտ
 Շիկահաւն ու սոխակ :

Պարբ. — Թռչուններուն երգին պէս ,
 Մեր ձայներն օդաւայ ,
 Կը հասցընեն ուղղապէս
 Մեր աղօթքն առ Աստուած :

Ժամահարբ. — Սըլաքս առա՛ջ կ'ընթանայ ,
 Թիք թաք , թիք թաք , թիք թաք ,
 Եւ դաշտին մէջ անխընայ
 Կ'աշխատի ժիր մըշակ :

Ժամահարբ. — Բայց իմ սըլաքս է գործօն ,
 Թիք , թաք , թիք , թաք , թիք , թաք ,
 Եւ արեւն ալ հորիզն
 Կը հասնի խիտտ արագ :

Պարբ. — Մեր դասերն ա՛լ վերջ գըտան ,
 Ժամն է արդ հանդչերու ,
 Երգենք մեր երգն իրիկուան ,
 Տանք հրաժեշտ իրարու :

28. ԵՐԳ ՕՐՕՐՈՅԻ

Մայրն. — Անոյ՛ զքնակն աչերն առեր ,
 Անոյ՛ չհովերն ալ տարուբեր .
 Իմ տատրակիս քունն է եկեր ,
 Անոյ՛ երգով ըսեմ օր օր :

Մանկիկն. — Ես քուն չունիմ , անոյ՛ մարիկ ,
 Հերիք աչքըս կապես , հերիք .
 Մէկ պահիկէն կ'ընեմ պաճիկ .
 Ձիս արձըկէ , մ'ըսեր օր օր :

Մայրն. — Մինչեւ չի լար մատաղ մանկիկ ,
 Կաթ չեն իտար անոր դառնիկ .
 Դուն չի լացած , իմ մէկ հատիկ ,
 Ես կաթ կուտամ , կ'ըսեմ օր օր :

Մանկիկն. — Խըղճուկ սըրտով ձայն եմ ձըգեր ,
 Կը ճըվճըվամ , դուն չես լըսեր .
 Անոյ՛ ձայնիդ ես ըզմայլեր ,
 Ես կուլամ , դուն կ'ըսես օր օր :

Մայրն. — Արցունքներդ մարգարտի պէս
 Երեսդ ի վար Խնչ կը թափես .
 Մի՛ լար , ձագուկ , մի՛ լար , մեղք ես ,
 Ո՛վ կ'ուզես , ան ըսէ օր օր :

Մանկիկն — Գիրկըդ ինձի հանգստարան,
Կաթիկդ բերնիս անոյշ ծորան.
Իրիկուան դէմ պառկիմ օրան,
Աչքըս գոցէ, ըսէ օր օր:

Մայրն. — Քրնացընեմ իմ աղանիս,
Մեծացընեմ սիրով սըբախ.
Կարմիր վարդի նըման բացուխ,
Շուքըդ նստիմ, ըսեմ օր օր:

Մանկիկն. — Քիչ մը թուցուր թեւերս սաքերս,
Ալ թըմրեցան փափուկ մըսերս.
Անոյշ քնակն առնէ աչերս,
Հապա սեղմէ, կարգա օր օր:

Մայրն. — Այդ խօսքերովդ չեմ խարսիր ես,
Կուզես որ զիս նըստեցունես.
Ձի քնանաս, կաթըս ուտես,
Դատարկ տեղը ըսեմ օր օր:

Մանկիկն. — Քիչ մը ճոր ճոր, քիչ մը ճար ճար,
Քիչ մը տան տան, քիչ մը պար պար.
Քիչ մ'ալ պատան առ հօրքս տար,
Քիչ մ'ալ մէն մէն, ետքը օր օր:

Մայրն. — Այդ քու լեզուդ կ'ուտեմ հիմայ,
Քու կանդունովդ կըտաւ չի կայ.
Տան տան, մէն մէն, ալ հարբարայ,
Աչուկ պահ պահ, ըսեմ օր օր:

29. ՏԱՆՏԻՐՈՒՇԻՆ (ԽԱՂ)

Հա՛, կ'ըսէ ժիր տանտիրուհին,
Շատ դործ ունիմ ես տակաւին:
Տուն՝ արտին մէջ օրն ի բուն, } Կրկնե՛.
Պէտք է կըրեմ յոգնութիւն:

Հա՛, կ'ըսէ ժիր տանտիրուհին, եւայլն.
Պէտք է թըմեմ է՛ն առաջ } Կրկնե՛.
Հայտի տաշտիս մէջ իմ հայ:
(Տղայք հաց կը քրեկն:)

Հա՛, կ'ըսէ ժիր տանտիրուհին, եւայլն.
Պէտք է կանուխ ես առտուն } Կրկնե՛.
Գարի ցանեմ հաւերուն:
(Գարի կը ցանեկն:)

Հա՛, կ'ըսէ ժիր տանտիրուհին, եւայլն.
Պէտք է կըրեմ խոտ դալար
Իմ դէր կովուցս համար:
(Կը հնձեկն:)

Հա՛, կ'ըսէ ժիր տանտիրուհին, եւայլն.
Թանձր սերէն դեղնորակ
Պէտք է շինեմ թարմ կարագ:
(Կարագը կը ծեծեկն:)

Հա՛, կ'ըսէ ժիր տանտիրուհին, եւայլն.
Պէտք է ընթրիքն հոգամ,
Սակեմ լուբիա կամ շողգամ:
(Շողգամ կը սկեկն:)

Հա՛, կ'ըսէ ժիր տանտիրուհին, եւայլն .
 Երբ որ անւորք տուն դառնան,
 Պէտք է անոնց տամ լաւ թան :
 (Թան կը հրահանեն :)

Հա՛, կ'ըսէ ժիր տանտիրուհին, եւայլն .
 Գողնոցիս մէջ՝ հանոցէն
 Պէտք է ձուերն ժողկեմ :
 (Գողնոցներուն ծայրերը վեր կ'առնուն :)

Հա՛, կ'ըսէ ժիր տանտիրուհին, եւայլն .
 Պէտք է հիմայ շուտ մըն ալ
 Աղտոտ լաթերս լուալ :
 (Լաթ կը լուան :)

Հա՛, կ'ըսէ ժիր տանտիրուհին, եւայլն .
 Պէտք է շուտով հովուն դէմ
 Ճերմակ լաթերս փռեմ :
 (Լաթ կը փռեն :)

Հա՛, կ'ըսէ ժիր տանտիրուհին, եւայլն .
 Բայց ա՛լ հասաւ մութ գիշեր,
 Պէտք է հանդէլ ու ննջել :
 (Կը ֆնանան :)

30. ԾԻԱՆ ՄԱՔՐՈՂ (ԽԱՂ)

Քնացող սղան, աչերը բանալով .
 Ինչո՞ւ արդեօք, սիրուն մայր,
 Կը շարժես զիս մեղմով .
 Տե՛ս, թարթիչներս իմ տըկար
 Կը գոցուին խոր քընով :

Մայր . — Տղա՛ս, ե՛լ, լըյն է ծագեր .
 Աշխատիլ պէտք է օրն ի բուն .
 Հոս փողոցէն, շատոնց է ի վեր
 Տղու մը ձայն չե՛ս լրտեր դուն .
 Էրսէ՛, ծըխան մաքրողն է մեր :

Ծխան մաքրող .

Ծըխան մաքրողն եմ . կ'աւլեմ շատ աժան,
 Վերէն դէպ վար ամէն ծըխան :
 Ծըխան մաքրողն եմ . կ'աւլեմ շատ աժան,
 Վերէն դէպ վար ամէն ծըխան :

Խումբը . — Քանդի կ'աշխատի,
 Տանք ծըխան մաքրողին
 Պատիւ կըրկին .
 Եւ թո՛ղ ծոյն ամօթով
 Պառկի

Մահճին քով յօրանջելով :
 Ծըխան մաքրողն է . ան կ'աւլէ աժան
 Վերէն դէպ վար ամէն ծըխան :
 Ծըխան մաքրողն է . ան կ'աւլէ աժան
 Վերէն դէպ վար ամէն ծըխան :

Քնացող սղան, կծկեցով .

Մայրի՛կ, ահա՛ հեռուէն
 Կը փչէ հովն ուժգին .
 Երկինք գետին սառեր են,
 Տաքուկ է անկողինս :

Մայրբ. — Տըզա՛ս, ե՛լ լոյսն է ծագեր .
 Աշխատիլ պէտք է օրն ի բուն :
 Յուրտ է, սակայն փողոցն ի վեր,
 Ո՛հ, չե՞ս լսեր ձայն մը թրթռուն,
 Լքուէ՛, ծխան մաքրողն է մեր :

Ծխան մաքրողբ. — Ծըխան մաքրողն եմ, եւայլն :

Խոււմբբ. — Քանդի կ'աշխատի,
 Տանք ծըխան մաքրողին
 Պատիւ կրկին .
 Եւ թո՛ղ ծոյլն ամօթով
 Պառկի
 Մահճին քով յորանջելով :

Ծխան մաքրողբ. — Ծըխան մաքրողն եմ. եւայլն :

Քնացող զան, պառկած սեղեն շարժելով .

Պիտի հյու ես ըլամ
 Ու ելնեմ անկողնէս,
 Բայց պէտք է որ քաղցրահամ
 Կաթնապուր ինձ բերես :

Մայրբ. — Տըզա՛ս, ե՛լ, բոյսն է ծագեր,
 Քու կաթնապուրդ ե՛ս հոգացի .
 Բայց միտքդ բեր, թէ վարն՝ անտէր
 Կայ տղայ մը քեզ պէս նօթի .
 Չե՞ս լսեր իր ձայնին շեշտեր :

Ծխան մաքրողբ. — Ծըխան մաքրողն եմ, եւայլն :

Խոււմբբ. — Քանդի կ'աշխատի,
 Ծխան մաքրողին տանք
 Հայ՝ կաթ տաք տաք,
 Եւ թող ծոյլն ամօթով
 Պառկի,
 Միշտ նօթի՛ յորանջելով :

Ծխան մաքրողբ. — Ծխան մաքրողն եմ, եւայլն :

Քնացող զան, ոտի ելնելով . —

Մն, ծուլութի՛ւն, մէկդի գնա՛,
 Աշխատինք եռանդով .
 Ահա՛, եղայ, մայր, քաջ տղայ,
 Պազ զիս ջերմ համբոյրով :

Մայրբ. — Քու ծուլութեանդ յաղթեցիր,
 Եկո՛ւր, հողի՛ս, գրկէ քու մայր .
 Բայց այն տղան որ՝ վարը՝ ժիր,
 Գործ կը փնտուէ, խեղճ մ'է ազբատ .
 Մն, բարեւերը զինք սիրալիր :

Ծխան մաքրողբ. — Ծխան մաքրողն եմ, եւայլն :

Մայրբ, խօսելով. — Է՛հ, ծխան մաքրո՛ղ :

Ծխան մաքրողբ. — Ի՞նչ կը կանչես, խաթուն մարի՛կ :

Մայրբ. — Հրամաներ ես, քիչ մը հոս կուգա՛ս :

Ծխան մաքրողբ. — Շատ աղէկ, գլխուս վրայ : Աստուած ձեզ կեանք տայ, խաթուն մարի՛կ, ազա տղա՛ս . կ'ուզէ՞ք, ալե՛մ ձեր ծխանը :

Մայրը. — Ո՛չ, զաւա՛կս : Նոյեմբերի մէջ այդ աւ-
ըլտուրն ընել տուինք : Բայց չե՞ս ուզեր իմ
աղուն հետ ճաշել հիմայ :

Ծխան մաքրողը. — Ճաշե՛լ, հը՛մ . . . շատ բարի սիրա-
մ՛ունիս դուն, խաթուն մարիկ : Բայց ես փա-
րա մ՛ալ չեմ վաստկած դեռ . չե՞ս սրդողիլը .
օրն ալ իրիկուն կ'ըլլայ :

Մայրը. — Սրդողի՛մ մը . չէ աղաս, չէ . իրիկուան
դեռ շատ ատեն կայ . հիմա կը ճաշես, ետքն
ալ կը վաստկես :

Ծխան մաքրողը. — Իրա՞ւ կ'ըսես, հանրմ՛ մարիկ,
գործիս շատ աղէկ պիտի գայ բան մը ուտել .
փորս անանկուկ դատարկ է հա՛ . . . :

Քնացող տղան. — Ի՛նչ, միթէ այսպէս, առտուն
կանուխ, մայրդ քեզ դուրս կը ձգէ տունէն,
առանց քեզի բան մը կերցնելու :

Ծխան մաքրողը. — Ա՛խ, արեւդ սիրեմ, մայրիկս
հոս չէ :

Քնացող տղան. — Ո՞ւր է որ :

Ծխան մաքրողը. — Ի՛նչպէս ըսեմ . հեռո՛ւն, շատ
հեռո՛ւն, այս գիւղէն անդին, ուր աղբըր-
տանքս ու ես մեր վաստակով հաց կը ճարենք
իրեն :

Քնացող տղան. — Աղբրտանքդ թո՛ղ աշխատին .
ո՞վ բան կ'ըսէ անանց . բայց դուն որ այսբան
պղտիկ ես, քեզի կ'իյնա՞յ աշխատիլ :

Ծխան մաքրողը. — Օ՛ր, աղա աղաս, երբ մարդ սիրա
ունի եւ իր ծնողքը կը սիրէ :

Քնացող տղան. — Է՛յ, ի՞նչ կ'ըլլայ :

Ծխան մաքրողը. — Մարդ բնաւ պղտիկ չի սեպուիլը
բարիք ընելու համար :

Խուսքը. — Սրդար բաժինն է

Հէք ծխան մաքրողին .

Հրճուանք կրկին .

Չէ՛, ա՛լ ծոյլ չի մնաց

Մեզմէ :

Բանուորին բազմն է միշտ բաց :

Ծխան մաքրողն է . ան կ'աւել ատան,

Վերէն դէպ վար ամէն ծխան :

31. ՈՒ ՁԻԿ ՈՒ ՁՕԿ, ՈՒ ԹԱՔ ՈՒ ԹՕՔ (ԽԱՂ)

Ու զիկ ու զօկ, ու զիկ ու զօկ,

Ու զիկ ու զիկ ու զօկ .

Երբ կ'աշխատի մարդ սրտով,

Գործ կը տեսնէ ապահով :

Յետանաւորն անիւին

Քըսէ դանակն ու կային .

Եւ այդ դարձող քարին վրան

Հին մետաղներն կըրճրտան .

Ու զիկ ու զօկ, եւ այլն :

(Տղաք որպէս քէ յետան կը բանեցնեն) :

(կրկին.)

Ու թար ու թօր, ու թար ու թօր,

Ու թար ու թար ու թօր .

Երբ կ'աշխատի մարդ սրտով,

Գործ կը տեսնէ ապահով :

Դարբինն ահա՛ սային քով

Ծեծէ երկաթն իր մուրճով,

Ու ծխացող մուրճին աակ

Կայծեր վազեն բոցարձակ :

Ու թար ու թօր, եւայլն :

(Ուժով ուժով երկար կը ծեծեն իբր սայի վրայ) :

Ու զիկ ու զօկ, եւայլն :

Յեսան քերիչն ալ հիմայ

Փայտին վրայ երթայ գայ,

Ու նուրբ ոլորկ տաշուկին

Խանութին մէջ կը լեցունին :

Ու զիկ ու զօկ, եւայլն :

(Քերիչով փայտ յղկելու շարժումներ կ'ընեն) :

Ու թար ու թօր, եւայլն :

Տե՛ս աղիւրէն ճերմկած

Հացագօրծն է, շինէ հաց .

Ձուտ խմորին կակուղ կոյտ :

Ձեռքով թրէ ան շուտ շուտ :

Ու թար ու թօր, եւայլն :

(Հայտը վեր կ'առնուն ու կը ձգեն նորէն) :

Ու զիկ ու զօկ, եւայլն :

Երբ եղանակն հասնի,

Սղոյն յանկարծ կ'երեւի,

Ու կրարելով հաստ կոճղեր :

Հօգայ ձմրան մեր պէտքեր :

Ու զիկ ու զօկ, եւայլն :

(Կը սղոյնէ, քեւերնուն մին ձեւացնելով սղոյն, միւսն փայտ) :

Ու թար ու թօր, եւայլն :

Տակառագործն է՛ն առաջ

Իր տակառները շինած,

Անոնց վրայ ի վերջէ

Շրջանակներ կ'անցունէ :

Ու թար ու թօր, եւայլն :

(Մեկ կոռւիտով միւս կը ւփիւն վրայ կը զարնեն) :

Ու զիկ ու զօկ, եւայլն :

Դերձակն ասուին չափելով

Կը կտրէ զայն խնամքով,

Ու մինչ տաքնայ արդուկը,

Կար կը կտրէ մանչուկը :

Ու զիկ ու զօկ, եւայլն :

(Կը կտրեն ու կը կտրեն) :

Ու թար ու թօր, եւայլն :

Իր ծեփիչով՝ որմածուն

Նետէ շաղախ սլափերուն .

Կիրը շուրին խառնուի,

Եռայ իսկոյն փրփրալի :

Ու թար ու թօր, եւայլն :

(Շեկֆ կը շինեն) :

Ու զիկ ու զօկ, եւայլն :
 Շատ մը գործեր տակաւին
 Բանսօր ձեռքի պէտք ունին .
 Արհեստն զմարդ չանպատուեր ,
 Երբ մարդ գիտնայ լաւ գործել :
 Ու զիկ ու զօկ, եւայլն :

(Կը ծախեն խնդագին) :

32. ՓՈՔՐԻԿ ՇԻՒՍՈՂՆԵՐ

Ժիր աղջկունք, շուտով
 Հոս եկէք իմ քով .
 Նոսեցէ՛ք կարգ կարգ ,
 Հիւսեցէ՛ք արագ .
 Թրա, լա, լա, լա, լա, լա .
 Թրա, լա, լա, լա, լա, լա .
 Նըստեցէ՛ք կարգ կարգ ,
 Հիւսեցէ՛ք արագ :

Փորրիկ բանսօրներ ,
 Ա՛լ բաւ աղմուկ ձեր .
 Ասեղնուդ վրան՝
 Տըւէ՛ք ձեր դերձան .
 Թրա, լա, լա, լա, լա, լա .
 Ասեղնուդ վրան՝
 Տըւէ՛ք ձեր դերձան :

Այսպէս՝ անչըշուկ՝
 Այնատեցէ՛ք դուք ,
 Օղակնիդ մէկ մէկ
 Ձի քակուն երբէք .
 Թրա, լա, լա, լա, լա, լա .
 Օղակնիդ մէկ մէկ
 Ձի քակուն երբէք :

Յ Ու ատեն ատեն
 Հիւսուածքնուդ մէջէն
 Ձեր օղակաց շար
 Ըրէ՛ք դուք հաւսար .
 Թրա, լա, լա, լա, լա, լա .
 Ձեր օղակաց շար
 Ըրէ՛ք դուք հաւսար :

Մինչ կէս չէ դուլպայն ,
 Պէտք է գործել լայն .
 Բայց երբ կէսն անցնիր ,
 Նեղցուցէ՛ք քըչիկ .
 Թրա, լա, լա, լա, լա, լա .
 Բայց երբ կէսն անցնիր ,
 Նեղցուցէ՛ք քըչիկ :

Հիւսուածքնիդ ընտիր
 Բանեցէ՛ք ժիր ժիր ,
 Քանզի աղքատներ
 Կան բոպիկ՝ անտէր .
 Թրա, լա, լա, լա, լա, լա .
 Քանզի աղքատներ
 Կան բոպիկ՝ անտէր :

Ապրիք , շա՛տ ապրիք ,
 Դուք իմ սիրելիք ,
 Կը տեսնեմ որ ձեր
 Չեն յոգնիր մատներ :
 Կը տեսնեմ որ ձեր
 Չեն յոգնիր մատներ :

33. ԵՐԳ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ

Ահա՛ հասաւ նոր տարի ,
 Հետը բերաւ նոր բարի .
 Մանր աղոյ՝ ուրախ օր ,
 Բարի զաւակ՝ հօր ու մօր :
 Մանր աղայք են ուրախ ,
 Ունին կաղին , կողինախ ,
 Սալորի չոր , չամիչ , թուղ ,
 Փշատ , յունապ եւ ընկոյզ :
 Մանր աղա՛յք , չի՛ մոռնար ,
 Աշխարհի մէջ չէք մինակ .
 Ուրիշ շատ խեղճ աղայք կան ,
 Աղքատ եւ անօգնական :

34. ԳՆՏԱԿԻ ԽԱՂ

Գնտակն է շատ սիրունիկ
 Ու ճիշդ ալ կըս կըրտրիկ .
 Մէկ գիէն կ'երթայ մէկդի ,
 Մաքուր մաքուր կը փայլի :

Տե՛ս , դունան ի՛նչպէս աչքիդ զխմաց
 Կ'եղնէ կ'իջնէ կամաց կամաց :
 Օ՛ն , ձեռքդ բա՛յ դուն .
 Տի դայ գնտակն իսկոյն .
 Երբ որ ձեռքդ գոցես ,
 Գնտակն ալ կ'ըլլայ անտես :
 Հիմա գնտակս աղաւորիկ
 Կը հանգչի մի վայրիկ .
 Ու ձեռքս յուշիկ կ'օրրէ զայն ,
 Ինչպէս մայր մ'իբր աղայն :
 Սիրէ գնտակս իմ՝ շատ հեղ
 Ճամբարդել տեղէ ի տեղ
 Տե՛ս , ահա՛ ճամբայ կ'եղնէ ,
 Ինչպէս որ սովոր է ,
 Անցնելով կանդ կ'առնու
 Քոյնս ամէն մէկ աղու :
 Թըռի՛ր շուտ շուտ , սիրուն գնտակ ,
 Ու ետ դարձիր դուն արագ .
 Եկուր ձեռքիս մէջ հանգիստ ա՛ռ ,
 Երբ կ'երգեմ երգ քեզ համար :
 Բարեւ ձեզ , բարով եկայք
 Դուք , գոյնզգոյն գնտակք .
 Բարեւ ձեզ որ մեր հոգուն
 Կ'ազդէք հրճուանք անհուն :
 Ո՛վ գնտակներ դունագեղ ,
 Ի՛նչ սիրուն էք , ի՛նչ շքեղ .
 Միացե՛ք դուք ի մեր երգ ,

Մեր խաղերուն եղիք ընկերք :
 Տե՛ս, կապոյտ է գնտակիս գոյն,
 Իմինս ալ է կանաչագոյն :
 Կարմրուկ եմ ես կեռասի պէս,
 Զիս մանիշակ մը կը կարծես :
 Ես արեւուն գոյնն եմ առեր
 Որ կը փայլի ամպերէն վեր :
 Նարընջագոյն ունիմ պատեան,
 Փայլուն բոցին շատ եմ նման :

35. Ս Ղ Ո Ց Ե Ն Ք

Եկէք, եղբա՛րք, ձեռքեր շարժենք,
 Մեր մօր համար փայտ սղոցենք,
 Սղոցենք, սղոցենք փայտ երկուքի,
 Մեծ մեծ կտոր, փոքրիկ կտորներ,
 Սղոցենք, սղոցենք, սղոցենք :

36. Պ Ա Ր Ե Ր Գ

Դէմ առ դէմ կամ քովէ քով
 Պարենք ի ձախ եւ ի յաջ,
 Լա, լա, լա, լա, լա, լա .
 Կոր դիժերով, ժիր ոտքով
 Երթանք ետեւ կամ յառաջ,
 Լա, լա, լա, լա, լա, լա, լա, լա,
 Լա, լա, լա, լա, լա, լա, լա, լա :

Շնորհալի ու սիրուն
 Մեր դէմք ու ձեռք թո՛ղ շարժին,
 Լա, լա, լա .
 Անշարժ նստիլ՝ ծոյլերուն,
 Երգն ու պարն են՝ մե՛ր բաժին,
 Լա, լա, լա :

Գասարանին կարգերէն
 Ո՞վ է երբէք գանգատեր,
 Լա, լա, լա .
 Գանգատողներն անոնք են
 Որոնք պարել չեն դիտեր .
 Լա, լա, լա :

Խինդով լեցուն մեր հոգին
 Ըլլանք պզտիկ հասակով,
 Լա, լա, լա .
 Առոյգ ոտքով եւ ուժգին
 Խաղանք, ոստնունք անվրդով .
 Լա, լա, լա :

Դպրոց՝ պարտէզն է մանկան,
 Երգ ու պարն ալ իր օրէնք .
 Լա, լա, լա .
 Հոն կեանքն է շատ պատուական,
 Խաղանք, երգենք ու պարենք .
 Լա, լա, լա :

37. ԲՈՅՆ ՅՌԶՆՈՑ (ԽԱՂ)

Անուշ ձայնով մէկ ժիր թռչուն
 Ըստուերի տակ շինեց իր բոյն .
 Յետոյ դրբաւ հոն երկու ձու ,
 Ուրկէ ելան թռչնիկ երկու ,
 Սիրուն քընքուշ թռչնիկ երկու ,
 Որոնց ձայնիկն ախորժելի
 Կըսէր բի բի բի բի բի ,
 Մայրիկ սիրելի , բի բի բի .
 Մենք հոս ենք , մեր քով եկ , բի բի բի :

38. ԶՈՐՍ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ա .

Տղայ մը . — Բայէ՛ք , օ՛ն , բա՛ն , բա՛ն , բա՛ն ,
 Բա՛ն , բա՛ն , բա՛ն , բայէ՛ք արդ ,
 Կը բերեմ մարդկութեան
 Նորածիկ խոտ ու վարդ :

Պարն ամբողջ . — Ո՛վ անցորդ , ըսէ՛ մեզ ,
 Ի՞նչ անուն կուտան քեզ :

Տղայ մը . — Աղուոր տըղա՛ք ,
 Գարուն եմ ես , թարմ եղանակ :

Պարն . — Օ՛ն , մասնակցէ մեր խմբին ,
 Մտիր մեր մէջ , շէն դարուն ,
 Եւ փունջերէդ թանկադին
 Տուր նըւէրներ ամենուն :

Ամենք . — Զըւարթ երգ , զըւարթ պար ,
 Երգենք , պարենք անդադար .
 Զըւարթ երգ , զըւարթ պար ,
 Երգենք , պարենք անդադար :

Բ .

Տղայ մը . — Բայէ՛ք , օ՛ն , բա՛ն , բա՛ն , բա՛ն ,
 Բա՛ն , բա՛ն , բա՛ն , բայէ՛ք արդ ,
 Կը բերեմ մարդկութեան
 Յորենի հունձք առատ :

Պարն ամբողջ . — Ո՛վ անցորդ , ըսէ՛ մեզ ,
 Ի՞նչ անուն կուտան քեզ :

Տղայ մը . — Աղուոր տըղաք ,
 Ամառն եմ ես , տաք եղանակ :

Պարն . — Մըտի՛ր մեր մէջ , ո՛վ ամառ ,
 Մեր խումբին մէջ մըտիր դուն ,
 Տէրջն հայով անըսպառ ,
 Բաշխէ՛ սրնունդ ամենուն :

Ամենք . — Զըւարթ երգ , զըւարթ պար , եւայլն :
 Գ .

Տղայ մը . — Բայէ՛ք , օ՛ն , բա՛ն , բա՛ն , բա՛ն ,
 Բա՛ն , բա՛ն , բա՛ն , բայէ՛ք արդ ,
 Կը բերեմ մարդկութեան
 Գինի քաղցր ու զըւարթ :

Պարն ամբողջ . — Ո՛վ անցորդ , ըսէ՛ մեզ ,
 Ի՞նչ անուն կուտան քեզ :

Տղայ մը . — Աղու՛ր արղաք,
Աշունն եմ ես, զո՛վ եղանակ :

Պարն . — Խաղողներով սեւ, ճերմակ,
Մըտիւր մեր մէջ, ս՛վ աշուն,
Եւ քու գինիդ ջինջ յըստակ
Թող տա՛յ աշխոյժ ամենուն :

Ամեհքը . — Զըւարթ երգ, զըւարթ պար, եւայլն :

Տղայ մը . — Բացէ՛ք, օ՛ն, բա՛ն, բա՛ն, բա՛ն,
Բա՛ն, բա՛ն, բա՛ն, բացէ՛ք արդ,
Կը բերեմ ձեզ սակայն
Զիւն, սառոյց բարդ ի բարդ :

Պարն ամբողջ . — Ո՛վ անցորդ, լսէ՛ մեզ,
Ի՛նչ անուն կուտան քեզ :

Տղայ մը . — Աղու՛ր արղաք,
Զըմեռն եմ ես, ցո՛ւրտ եղանակ :

Պարն . — Հող չէ, դուն ալ ներս մըտիւր,
Քոյրերուդ պէս, ս՛վ ձըմեռ,
Խիստ օգերէն՝ այս երկիր
Կ'ըլլայ նորէն պողաբեր :

Ամեհքը . — Զըւարթ երգ, զըւարթ պար, եւայլն .

39. ԵՐԳ ԳԱՐՆԱՆ

Ի՛նչ անոյշ շունչ մը կայ
Օղին մէջ տաքուկ .

Կը հալին մերձակայ
Զիւներ թափթփուկ .

Ի՛նչ հաճոյք, ընկերներ,
Գարունն է մեզ ընկեր :

Ապրի թո՛ղ գարուն,
Եղանակ սիրուն :

Սեւուլիկ ծիծեռնակ
Իր փափկիկ բոյնին

Պահելով յիշատակ՝
Ետ կուգայ կրկին .

Շուտ եկուր, սիրունի՛կ,
Ու խօսէ մեր քովիկ :

Ապրի թո՛ղ գարուն,
Եղանակ սիրուն :

Ոսկեփայլ միշտ ուրախ՝
Աղուոր արեգակ

Յանցէ աջ ու ձախ
Կատոյտ երկնից տակ,

Որ երկիրն ալ խնդայ
Ու առատ բերքեր տայ :

Ապրի թո՛ղ գարուն,
Եղանակ սիրուն :

40. Ն Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Առաւօտուն երբ լուսնայ
 Ու ողջ քաղաքն արթննայ,
 Ներկարարն է որ միայնակ,
 Արկղիկը շարկած, դուրս կուգայ:
 Կը գոչէ ան՝ թիք, թաք, թիք, թաք, թաք:

Երբ անձրեւէ իր բաղբէն,
 Գոհ սրտով Աստուծմէն,
 Օրապահիկն իւր միակ,
 Այս է եւեթ խոկն ամէն.
 Եւ կը գոչէ թիք, թաք, թիք, թաք, թաք:

Եւ կը ծռի ամէնուն
 Կօշիկներուն անյարգար,
 Ու մեծ ջանքով խողանակ
 Կ'երթայ կուգայ անդադար.
 Եւ կը գոչէ թիք, թաք, թիք, թաք, թաք:

41. Ք Ա Յ Լ Ե Ր Գ

Աստուն արեւը կը ծագի,
 Թռան լա լա, լան լա լա.
 Թռչունը միշտ կը թռչտի,
 Թռան լա լա, լան լա լա:

Զուարթ խումբեր մանկական,
 Թռան լա լա, լան լա լա.
 Երգեցէ՛ք երգեր սիրական,
 Թռան լա լա, լան լա լա:

42. Ա Ղ Օ Յ Ք Ա Ռ Ա Ի Օ Տ Ե Ա Ն

Կ'օրհնենք ըզքեզ, Տէր Աստուած,
 Որ մեզի կեանք ես տրած.
 Կեանքը՝ կ'ըսեն՝ փոքրերուն
 Միշտ անուշ է եւ սիրուն.
 Այս կեանքը մեզ պարգեւէ, Տէ՛ր.
 Գոհանալ քեզմէ եթէ չենք գիտեր,
 Բայց դու չե՛ս կարդար միթէ մեր սիրտեր:

Քու շնորհացըդ արեւ
 Թո՛ղ փայլի միշտ մեր վերեւ.
 Մեր ծնողաց ու մեր տան
 Որք սիրոյդ են ապաստան.
 Աստուած բարի, Աստուած հրգօր,
 Գու առաջնորդէ մեր քայլերն անզօր,
 Որ օրհնենք ըզքեզ միշտ համապազօր:

Գու Աստուած ես մէկ հատիկ,
 Լըսես ձայնին մեր գողտրիկ,
 Եւ տըզայոց որք կ'երգեն,
 Կը ժրպտիս դու երկինքն.
 Աստուած բարի, Աստուած արգար,
 Գեռ անունդ ուղիղ չենք գըրեր կարգար:
 Բայց դու մեր վրայ հրակէ՛ անդադար:

43. ՈՒԼԻԿՆԵՐ

Իմ ուլիկներ, փոքր այծուկներ,
 Դէ՛հ շարժեցէ՛ք, դուռը բացէ՛ք.
 Ահա՛ կուգամ կանաչ դաշտէն,
 Ապրուշումէ խոտն արածած,
 Պաղ աղբիւրի ջուրը խմած,
 Կուրծքս լեցուն ես ձեզ համար
 Ծիծերուս մէջ կաթ կը բերեմ,
 Բացէ՛ք, բացէ՛ք, ձեզի կ'ըսեմ :

44. ՀՆՁԱՀԱՐՆԵՐՈՒ ՇՐՁԱՊԱՐԸ

Մեր արտերուն երբ Աստուած
 Առատ առատ հունձ զրկէ,
 Բարիքներէն զգածուած՝
 Պէտք է ամէն մարդ երգէ :

Ուրախ նշան երբ տրուի,
 Մենք շրջապարն սկսինք .
 Ո՛հ, շրջապարէն յերաւի
 Մենք շատ ու շատ կ'ախորժինք :

Մշակն հոս է, հո՛ս, մեր քով,
 Երջանկութեամբ կը ժպտի .
 Անով մեր սիրան հաճոյքով
 Ուրախութեամբ կը լեցուի :

Ո՛հ, լի՛նչ քաղցր է եւ բարի,
 Ո՛րչափ զանի կը սիրեն .
 Իր ձեռքերն են, ո՛հ, արի,
 Որ ախօսներ կը փորեն :

Սակայն, տղայք, այսօր ալ
 Երբ որ այսքան կը խնդար,
 Երախտագէտ, շնորհակալ,
 Աստուծոյ պէտք է փառք տար :

Մարդուն ձեռքն է աշխոյժ
 Որ կը հերկէ, կը ցանէ .
 Բայց Աստուած միշտ կուտայ ոյժ,
 Աստուած սերմը կ'աճեցնէ :

45. Ա Ղ Օ Յ Ք

Ո՛վ երկնքի եւ երկրի Տէր,
 Դու մեր բարի հայր,
 Կը խնդրեմ՝ մաղթանքներս ընդունէ՛
 Եւ շնորհէ՛ բարի միտք,
 Որ լաւ ուսանիմք
 Եւ բարի լինիմք : } Կրկնէ՛ .

46. Մ Ա Ր Մ Ն Ա Մ Ա Ր Ձ

Մ'ն, տղա՛յք, եկէ՛ք մարմնամարզ ընենք.
 Մէկ, երկու, երեք. շիփ շիտակ կայնինք.
 Առաջ ձեռքերնիս դնենք կուրծքերնիս,
 Շարժենք ուղղակի վեր վեր կողմնակի,
 Չախը, աջը, ձախը, աջը, ձախը, աջը:

Հիմայ ալ, տղա՛յք, փայտեր սղոցենք.
 Հիմայ ալ, տղա՛յք, փայտեր սղոցենք.
 Փայտը ձախ ձեռքով ամուր մը բռնենք,
 Սղոցն աջ ձեռքով յետ առաջ տանենք,
 Խըռը խըռը, խըռը խըռը, խըռը խըռը:

Հիմայ ալ, տղա՛յք, փայտերնիս ջարդենք.
 Հիմայ ալ, տղա՛յք, փայտերնիս ջարդենք.
 Աջ ձեռքերնիս առաջ, ձախը ետեւ բռնած,
 Վերցնենք կացին, իջեցնենք փայտին,
 Բադը ջադը, բադը ջադը, բադը ջադը:

Պէտք է մենք քիչ շատ խորված սուրճ աղանք,
 Պէտք է մենք քիչ շատ խորված սուրճ աղանք.
 Առաջ սուրճերնիս լեցնենք ջաղացքնիս,
 Կոթն աջ ձեռքով դարձնենք շուտով,
 Խըժը վըժը, խըժը վըժը, խըժը վըժը:

Հիմայ ալ, տղա՛յք, գնտակնիս խաղանք,
 Հիմայ ալ, տղա՛յք, գնտակնիս խաղանք.
 Գնտակն աջ ձեռքով վեր նետենք շուտով,
 Յետոյ ալ բռնենք երկու ձեռքերով,
 Հօբը բօմը, հօբը բօմը, հօբը բօմը:

Հիմայ ալ, տղա՛յք, օ՛ն, չուվան խաղանք,
 Հիմայ ալ, տղա՛յք, օ՛ն, չուան խաղանք.
 Դարձնենք երկկողմի, մէկը թո՛ղ ցատկէ,
 Աջ ու ձախ ձեռքով դարձնենք շուտով,
 Շիբը շաբը, շիբը, շաբը, շիբը շաբը:

47. Ե Ր Գ Ա Ռ Ա Ի Օ Տ Ե Ա Ն

Բարի լոյս, բարի լոյս, աղնիւ ուսուցիչ.
 Որչա՛փ ուրախ զուարթ թուի ամէն ինչ.
 Ընկերք մեր՝ ձեր գալն ողջունեն,
 Մեր սրտերն ուրախ են, զի բարիք ընեն.
 Բարի լոյս, բարի լոյս, աղնիւ վարժարան.
 Յօժարիլ, յարգել, պատուել ամէն հրաման,
 Զի սէր է մեր գործն ի խաղ եւ ի գործ.
 Ողջո՛յն, ողջո՛յն մեր զուարթ օր:

48. Ա Ռ Ա Ի Օ Տ Ե Ա Ն Ա Ղ Օ Յ Ք

Փառք քեզ, հա՛յր իմ, որ ինձ տուիր
 Գիշերուան մէջ հանդիսա ընտիր.
 Տուիր նաեւ արեւ պայծառ,
 Որ կը ծագի ինձի համար:
 Հա՛յր իմ, փա՛ռք քեզ, որ դու ունիս
 Անհուն սէր եւ խնամք առ իս,
 Եւ գեղեցիկ ըրիր զաշխարհ
 Ինձ նմանող տղայոց համար:

Օգնէ՛ ինձ որ կատարեմ ես
 Իմ ամէն պարտքս, հայր իմ, առ քեզ .
 Ըլլամ ազնիւ եւ բարեսիրտ,
 Առ այլս չըլլամ երբէք ես բիրտ :

Ինչ որ ընեմ, գործեմ, խաղամ,
 Օգնէ ինձ որ բարի ըլլամ .
 Որչա՛փ մեծնամ, ըլլամ սիրուն,
 Հայր իմ, քեզի եւ ամենուն :

49. ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳ

Բարի լոյս, ձեզ բարեւ կուտամ,
 Ձեզ տեսնելով՝ կ'ուրախանամ .
 Ձուարթ դէմքերըն կը դիտեմ,
 Ճերմակ ձեռքերն ալ կը տեսնեմ .
 Բարի լոյս ամենուդ, բարի լոյս ամենուդ,
 Բարի լոյս, բարի լոյս, բարի լոյս ամենուդ :

Իմ թաշկինակս բերի, տեսէ՛ք,
 Եթէ դուք ալ ունիք, ցուցէ՛ք .
 Դուրս հանելով՝ երեքցուցէ՛ք,
 Առադաստի նման բացէ՛ք :
 Բարի լոյս ամենուդ, բարի լոյս ամենուդ,
 Բարի լոյս, բարի լոյս, բարի լոյս ամենուդ :

50. Զ Ա Ն Գ Ա Կ

Չանդակն ահա՛ զարնուի,
 Եւ իր ձայնովն արծաթի
 Կ'երգէ օդին մէջ ասանկ,
 Տա՛նկ, տա՛նկ, տա՛նկ, տա՛նկ :
 Ու գիշերուան մէջ խորունկ
 Կը լսուի ձայն ներդաշնակ,
 Տա՛նկ, տա՛նկ, տա՛նկ, տա՛նկ :
 Այլսարհ ձայնէն կ'արթնայ,
 Գործէ մեղուն ու սղայ,
 Տարածուի ձայն ներդաշնակ,
 Տա՛նկ, տանկ, տա՛նկ, տանկ :

51. Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ

Մարտն անցաւ, եկաւ Ապրիլ գեղեցիկ,
 Հեռու տեղերէ զարձաւ ծիծեռնիկ .
 Բարով դու եկար, գարնան կարապետ :
 Բոյն շինողներուն ամէնէն վարպետ :
 Փախաւ կռուակը, թռաւ վերերէն,
 Սոխակն հեռացաւ մեր պարտէզներէն .
 Միայն դուն մնացիր ճնճղուկներուն հետ,
 Սիրուն ծիծեռնակ, գարնան կարապետ :
 Պատուհանիս մէջ շինէ՛ քու բոյնը,
 Անուշ ձայնովդ երգէ՛ գարունը .
 Ձու ածէ՛, հանէ գեղեցիկ ձագեր,
 Մեր քովը կեցիր մինչեւ Սեպտեմբեր :

52. Ժ Ա Մ Ա Յ Ո Յ Յ

Ժամացոյց խեղճ հին,
 Հերիք դու թիք թաք
 Խուցիդ մէջ մթին
 Կ'երթաս միշտ յառաջ.
 Թիք թաք, թիք թաք,
 Խուցիդ մէջ մթին
 Կ'երթաս միշտ յառաջ:

Սրբաբիդ յուշիկ քայլ
 Միշտ յառաջ կ'երթայ,
 Գիտեմ պարտասեալ՝
 Յողնած ես հիմայ.
 Թիք թաք, թիք թաք,
 Գիտեմ պարտասեալ՝
 Յողնած ես հիմայ:

— Հանգչիմ, սակայն ո՞վ
 Ժամն ըսէ քեզի.
 Տան մէջ ժամն ի՞նչով
 Մարդ գիտնայ պիտի.
 Թիք թաք, թիք թաք,
 Տան մէջ ժամն ի՞նչով
 Մարդ գիտնայ պիտի:

Եւ ժամացոյցն իր
 Շրջանն աւարտած,
 Խուցին մէջ ժիր ժիր,
 Կ'երթայ միշտ յառաջ.
 Թիք թաք, թիք թաք,
 Խուցին մէջ ժիր ժիր
 Կ'երթայ միշտ յառաջ:

53. Կ Ա Ղ Խ Ա Յ Ո Ի Ն

Ո՛ւր կ'երթաս, ո՞վ կաղ խաթուն,
 Կ'արգիլեմ զքեզ, կ'արգիլեմ, (կրկնէ'.)
 — Կ'երթամ դաշան հովասուն,
 Մի՛ արգիլեր զիս, մի՛ արգիլեր զիս:
 Հոն ի՞նչ կայ որ ի՞նչ պիտի ընես,
 Թո՛ղ չեմ տար, կ'արգիլեմ քեզ:
 — Մանիշակ տի ժողվեմ ես,
 Թո՛ղ տուր երթամ, մի՛ արգիլեր:
 Որո՛ւ տալու համար արդեօք,
 Կ'արգիլեմ զքեզ, կ'արգիլեմ:
 — Ո՛վ որ պարկեշտ է եւ խելօք,
 Հոգիդ սիրես, Մի՛ արգիլեր:
 Ի՞նչ է անուն այդ խելօքին,
 Ծուտով ըսէ, կ'արգիլեմ քեզ:
 — Վարդ է անուն այդ խելօքին,
 Հասկցար դու, հա՛, հա՛, հա՛, հա՛:

54. ՕՐ ՕՐ ՄԱՆՆԻԿԻՆ

Քունն է եկեր իմ Մաննիկին,
Առնեմ օրրեմ զայն յիմ գրկիս,
Պատմեմ վէպեր աղանեկիս,
Մինչեւ տանի քունն իմ զաւկիս:

Լոյսեր ծագեր, ատենն է ուշ,
Ա՛լ ծանրացեր աչքն իւր մեղոյշ,
Երգեր ըսեմ անոյշ անոյշ,
Թո՛ղ քընանայ հողիս մուշ մուշ:

Հանգչի գլխիկն իւր ոսկեհեր,
Կուրծքիս վրայ տրոփուն յիւր սէր՝,
Նոյեմ սամայր քնքոյշ մազեր,
Թո՛ղ ոսկեղէն գան երազներ:

Օր օր օր օր, Մաննիկս աղւոր,
Քու ծնողայ օր փառաւոր,
Օր օր օր օր, սրտի՛ս հատոր,
Հայր երկնաւոր տայ քեզ շատ օր:

Ննջէ ծաղիկն ի ծրլօտին,
Ննջեն փոքրիկ գառներն հօտին,
Գրուին իւր թեւին տակ յիւր բունին
Ննջէ հեղիկ եւ աղանին:

Նիրհէ՛ դուն ալ, իմրս թռչուն,
Համբուրիս տակ տանի քո քուն,
Հանգչիս խաղաղ մինչեւ առտուն,
Սոխակաց հետ զարթնուս եւ դուն:

55. ՕՐ ՕՐ

Օ՛ր օ՛ր, աղւոր մանչս, օ՛ր օ՛ր,
Քեզ մեծցընեմ օրէ օր,
Հօրըդ նման մարդ եղիր,
Տունըդ քեզմով տեսնէ օր:

Ծոցիկըս տաքուկ օրրան,
Մազերըս ծածկոց վրբան,
Մըշի՛կ, մըշի՛կ քըրափէ,
Պառկինք բերան առ բերան:

Գիշերն եմ քովիկդ արթուն,
Ձիս կը գտնես քովդ առտուն,
Քեզի մէկո՞ւն չեմ հաւտար,
Սրտիս սէրն ես, կեանքս ես դուն:

Ո՛վ որ տեսնէ, թո՛ղ դատէ,
Մանչուկըս հարազատ է.
Կունս ու կըրոր նոնուշիկ,
Հազարին մէջ մէկ հատ է:

56. ՓԻՍԻԿ ՈՒ ՄԿՆԻԿ

Ճերմակ կատուն յուշիկ յուշիկ
Բռնել կուգայ փոքր մկնիկ .
Բայց մուկն առաւ ձայն թաթերուն ,
Փախաւ դնաց , շուտով հեռուն :

Փախիր , սիրուն իմ խեղճ մկնիկ ,
Դարձի՛ր դու մեր ասն բոլորտիք .
Կատուն կուգայ արագ արագ ,
Բռնելու քեզ թաթերուն տակ :

57. ՓՈՔՐԻԿ ԳԻՏՈՒՆԸ

Այս է բարձր , այս է ցած ,
Տեսէ՛ք որչա՛փ եմ սորված .
Այս է նեղը , իսկ այս է լայն ,
Դեռ շատ բան գիտեմ սակայն .
Վերը տես իմ գլուխս ,
Վարը նայնպէս ոտքերըս .
Երկու ձեռքերս մարբեմ յաճախ ,
Մին է իմ աջ , իսկ միւսը ձախ .
Իմ հինգ փոքրիկ մատներ կըր ,
Որով բռնեմ տանձ ու խնձոր .
Հոս է քիթս , հոս են աչերս ,
Հոս ալ կարմիր այտերս .

Հոս է բերանս կըրորիկ ,
Հոս ալ թուշըս թօմպուլիկ .
Ունիմ երկու պանջներ ,
Լքսն բարի միշտ խօսքեր .
Երկու ձեռքերս վեր վերցնեմ ,
Ծափ զարնելով վերջացնեմ :

Ամեհն ի միասին

Մենք ամենքնիս ալ ձեր առջեւ ենք կանգներ ,
Կը մտածէք անշուշտ թէ շատ փոքր ենք դեռ .
Բայց թողէք որ պատմենք զործեր մեր անբաւ ,
Թէպէտ անոնք փոքրիկ , սակայն միշտ են լաւ :

Առանձին

Դուք կը տեսնէք զիս որոշեալ ճիշդ ժամուն
Որ դարակիս առջեւ նստած եմ ժպտուն :
Ձեռքերս մարուր միշտ պահելու տանիմ խնամ ,
Որպէս զի երբ տեսնէք զանոնք , չամչնամ :
Ես ալ կ'երթամ ի դասարան հանդարտիկ ,
Երբ դասատուն ըսէ կեցիր կամ անցիր :

Ամեհն ի միասին . — Մենք ամենքնիս ալ , եւ այլն :

Առանձին

Ես դասատուիս ամէն ըսած խօսքերուն ,
Այո՛ , կ'ըլլամ շատ մտադիր եւ արթուն :

Լաւ կ'աշխատիմ սորվիլ դասերս ամենայն,
Գիտեմ կարգալ գրել, հեղել ֆերական:

Քաղաքավար եմ ամէնուն հաւասար,
Ձեմ սիրեր զայն որ կ'ուզէ վէճ ու պայքար:

Ամենքն ի միասին. — Մենք ամենքնիս ալ, եւայլն:
Առանձին

Թէ պատահմամբ զնասեմ տղու մ'երբեր,
Ձուարթութեամբ կ'ըսեմ. «Խնդրեմ ներեցէ՛ք»:

Խոնարհութեամբ գլխարկս հանեմ ճիշդ այսպէս,
Երբ ընկեր մը կամ բարեկամ տեսնեմ ես:

Մի՛ կարծէք որ ես ալ կ'ուզղեմ առ ընկեր
Խաղի ատեն դպրոցի մէջ գէշ խօսքեր:

Ամենքն ի միասին

Ուխտենք ըլլալ ժիր, մաքրասէր եւ զգօն,
Յիշենք յաւէտ մեր դպրոցին այս կանոն:

58. ԲԱՐԻ ԵԿԱՅՔ

Բարի եկայք, ո՛վ բարեկամք
Ի մանկական պարտէզ.

Մրտով ուրախ զուարթ կ'ըլլանք,

Տեսնելով հոս զձեզ:

Կեցցէ՛ կեցցէ՛ մեր պզտիկ վարժարան.

Մեր սիրտ ուրախ խայտայ ի տես

Ձեր այս այցելութեան:

Վարժուհիք մեզ սիրեն,

Բարի ըլլալ սորվեցնեն:

Մեզ հետ մաղթեն զալուստ բարի,

Ձեզ ի պատիւ կ'երգենք:

Կեցցէ՛, կեցցէ՛ մեր պզտիկ վարժարան.

Մեր սիրտ ուրախ խայտայ, ի տես

Ձեր այս այցելութեան:

59. ԱՐԶԵՍԱԻՈՐՔ

Հինգն առանձին. — Մենք ճարտար արհեստաւոր,
Գիտենք արհեստ բիւրաւոր.

Մէկիկ մէկիկ ձեզ ըսենք,

Տեսէք ս'ըջափ գիտենք:

Խումբն. — Ի՞նչ են ձեր արհեստներ,

Ըսէ՛ք մեզ, չենք համբերեր.

Թէ այնքան լաւ գիտէք,

Մրցանակ մը դուք կ'առնէք:

Դերձակուհին. — Մարուր դերձակ ես կոչուիմ,
Կտրեմ, կարեմ ու հրճուիմ.

Ծաղապատիկ միշտ նստիլ

Ձեմ ուղեր ես, այլ պարել:

Խումբն. — Դու միշտ այդպէս երբ պարես,

Ասեղ դերձան ձեռք շառնես,

Ձես սորվիր ս'չ լաւ կարել,

Ո՛չ մօտա հագուստ ձեւել:

Ումնադիրն . — Երբ ըսեմ՝ ձեզ գիտցածս ալ,
Պիտի սկսիք զարմանալ .
Պատերու ծայրը կ'երնեմ,
Ըսե՞մ, վարպետ որմնադիր եմ :

Դարբինը . — Ես ալ վարպետ դարբին եմ,
Մուրճով երկաթը ծեծեմ,
Շինեմ շատ գործիներ,
Բանալիներ, կղզանքներ :

Կօշկակարը . — Հապա վարպետ կօշկակար
Կոչուիմ ես, ու անդադար
Ասեղն առած միշտ կարեմ,
Գօգէթ կօշիկներ շինեմ :

Գրագիրը . — Ըսե՞մ ձեզ արհեստըս,
Տեսէ՛ք, եկաւ իմ միտքըս .
Լաւ գրագիր կը կոչուիմ,
Մրցանակ ես կ'ընդունիմ :

Խոււմբն . — Զանանք բլլալ միշտ բարի,
Աշխատասէր եւ արի .
Աշխատութիւնն հաճոյից
Քաղցրագոյնն է բիւր խաղից :

60. ԳԻՇԵՐ ԵՒ ՅԵՐԵԿ

Սը՛ս, ալ պէտք չէ խօսիլ ինդալ,
Ննջենք խաղաղ, օ՛ն, ամէնքս ալ .
Գիշեր է, ձայն պէտք չէ : (Կրկնէ) :

Առտու եղաւ, պէտք է զարթնուլ,
Պէտք չէ պառկիլ դանդաղ ծոյլ ծոյլ .
Լոյս փայլո՛ւն, քեզ ողջո՛յն, (Կրկնէ) :

61. Հ Ո Վ Ո Ւ Հ Ի Ն

Խոււմբն . — Տես հովուհին սիրունիկ,
Թուա լա լա լա, շատ պզտիկ .
Հոս հովուհին սիրունիկ
Կ'արածէ իր հօտիկ,
Թուա լա լա լա, թուա լա լա լա,
Կ'արածէ իր հօտիկ :

Հովուհին . — Իմ սիրուն գառնուկներ,
Թուա լա լա լա, են հանգչեր .
Իմ սիրուն գառնուկներ
Շատ հանգարտ են նստեր,
Թուա լա լա լա, թուա լա լա լա
Շատ հանգարտ են նստեր :

Խոււմբն . — Տես հովուհին սիրունիկ,
Թուա լա լա լա, շատ պզտիկ .
Տես հովուհին սիրունիկ
Ծառին տակը խաղաղիկ,
Թուա լա լա լա, թուա լա լա լա
Ծառին տակը խաղաղիկ :

Հովուհին . — Հանգչիմ ես ալ վայրկեան մը
 Թուա լա լա, անկիւն մը .
 Գոցեմ աչերս վայրկեան մը,
 Քաշեմ աղւոր քունիկ մը,
 Թուա լա լա, Թուա լա լա,
 Քաշեմ աղւոր քունիկ մը :

Խոււմբն . — Բայց ահա՛ տես կ'արթննայ,
 Թուա լա լա, աչերն բանայ .
 Յօրանջեղէն կը նստի,
 Յետոյ կ'եղնէ կը կանգնի,
 Թուա լա լա, Թուա լա լա,
 Յետոյ կ'եղնէ կը կանգնի :

Հովուհին . — Ո՛հ, ատենն անցած է,
 Թուա լա լա, շատ ուշ է,
 Սիրուն գառներս առնելով
 Երթամ ես ալ անոնց քով,
 Թուա լա լա, Թուա լա լա,
 Երթամ ես ալ անոնց քով :

62. Հ Ա Յ Ր Մ Ե Ր

Ո՛վ Հայր մեր, երկնքէն՝
 Ուր ամէն հրեշտակ
 Ծնրադրած քեզ կ'օրհնեն,
 Լուր մեր ձայն անուշակ :

Մեզի պէս փոքրերուն
 Պաշտպանը դու ես, Տէ՛ր .
 Քեզմով է որ հեռուն
 Կ'երթան ցաւ փորձանքներ :

Դու ես որ ամէն օր
 Մեր հացը կուտաս մեզ,
 Ու նման դիտոս մօր՝
 Մեր վրայ կը հսկես :
 Սիրեցէք միշտ զիրար,
 Կ'ըսես մեզ, ո՛վ Աստուած .
 Ու փոխան՝ քու գիրկը
 Յոյց կուտաս մեզ ժպտած :

63. Ե Ր Ա Ժ Ի Շ Տ Ք

Մենք լաւ երաժիշտներ ենք,
 Շատ մը նուագարաններ կ'ածենք .
 Ունինք ջութակ, տաւիղ, սրինգ,
 Դաշնակով թմբուկ . կ'երգենք,
 Զոր օրինակ, զոր օրինակ, ահա՛ ձեզ ջութակ,
 Պի լի, պի լի, լի լի լի, պի լի, լի լի,
 Այսպէս մենք լաւ կ'ածենք
 Պի լի, լի լի, պի լի, լի լի,
 Հոյ, հոյ, հոյ, այսպէս մենք լաւ կ'ածենք,
 Այսպէս մենք լաւ կ'ածենք :

64. Մ Շ Ա Կ Ն

Մշակն ի՛նչպէս կը սերմանէ (կրկնէ.)

Յորեն՝, կորեակ, գարի :

Մշակն այսպէս կը սերմանէ (կրկնէ.)

Յորեն՝, կորեակ, գարի :

Մշակն ի՛նչպէս կը հնձէ (կրկնէ.)

Յորեն, կորեակ, գարի :

Մշակն այսպէս կը հնձէ (կրկնէ.)

Յորեն, կորեակ, գարի :

Մշակն ի՛նչպէս կը ժողվէ (կրկնէ.)

Յորեն, կորեակ, գարի :

Մշակն այսպէս կը ժողվէ (կրկնէ.)

Յորեն, կորեակ, գարի :

Մշակն ի՛նչպէս կը ծեծէ (կրկնէ.)

Յորեն, կորեակ, գարի :

Մշակն այսպէս կը ծեծէ (կրկնէ.)

Յորեն, կորեակ, գարի :

Մշակն ի՛նչպէս կը մաղէ (կրկնէ.)

Յորեն, կորեակ, գարի :

Մշակն այսպէս կը մաղէ (կրկնէ.)

Յորեն, կորեակ, գարի :

Մշակն ի՛նչպէս կը ծախէ (կրկնէ.)

Յորեն, կորեակ, գարի :

Մշակն այսպէս կը ծախէ (կրկնէ.)

Յորեն, կորեակ, գարի :

Մշակն ի՛նչպէս հանգիստ կ'առնէ (կրկնէ.)

Երբ իր գործն աւարտէ :

Մշակն այսպէս հանգիստ կ'առնէ (կրկնէ.)

Երբ իր գործն աւարտէ :

Երբ վերջացնէ մշակն իր կալ, (կրկնէ.)

Եզներուն կը պռռայ .

«Իեհ, քաջ եղիք» այսպէս ուրախ (կրկնէ.)

Զուարթ նա տուն կը դառնայ :

65. Ե Ր Գ Ա Ղ Ո Ւ Է Ս Ի

Զար աղուէ՛ս, դու սագը գողցար,
Նորէն ետ դարձուր, նորէն ետ դարձուր .

Թէ ո՛չ, որսորդը պիտի գայ իր զէնքերովը :
Թէ ո՛չ, որսորդը պիտի գայ իր զէնքերովը :

Իր երկար հաստ հրացանը գնտակ կ'արձակէ,
Որպէս զի կարմիր ներկուիս եւ իսկոյն մեռնիս,
Որպէս զի կարմիր ներկուիս եւ իսկոյն մեռնիս :

Սիրունիկ աղուէ՛ս, խրատուէ՛, մի ըլլար բնաւ գող,
Խորված սագը գողնալու տեղ՝ մուկ որսայ եւ կեր :
Խորված սագը գողնալու տեղ՝ մուկ որսայ եւ կեր

66. Գ Ն Տ Ա Կ Ի Խ Ա Ղ

Հիմա ա՛ռ այս գնտակը .

Մի՛ ձգեր որ իյնայ վար ,

Դեղին , կարմիր եւ կապոյտ .

Հիմա առ այս գնտակը .

Մի՛ ձգեր որ իյնայ վար :

Ափիգ մէջ բռնէ

եւ հանդարտ մը կեցուր ,

Դեղին , կարմիր եւ կապոյտ .

եւ գլխուս պէս ալ կըր ,

Քեզի եւ ինծի համար .

Ափիգ մէջ բռնէ

եւ հանդարտ մը կեցուր :

Ո՛հ , շատ գեղեցիկ է ,

եւ բուրդէ շինուած է :

Ոչխարին կռնակը կը մեծնայ

Քեզի եւ ինծի համար .

Ո՛հ , շատ գեղեցիկ է ,

եւ բուրդէ շինուած է :

Հիմա , կակուղ գնտա՛կ ,

Դէպ վեր բարձրացիր .

Ծառեր , ծաղիկներ վար մնան ,

Դու ջանա՛ վեր բարձրանալ .

Ա՛հ , կակուղիկ գնտակ ,

Դէպ վեր բարձրացի՛ր :

Յողնեցար , սիրո՛ւնս ,

Վար պէտք է իջնես ,

Հասուն խնձորներու պէս ,

Քեզի եւ ինծի համար .

Յողնեցար , սիրո՛ւնս ,

Վար պէտք է իջնես :

Չախէն դէպ աջ շարժէ

եւ ես լարէդ բռնեմ .

Ճօճանակն այսպէս կը ճօճայ ,

Թիք , թաք , թիք , թաք , ծանր արագ .

Չախէն դէպ աջ շարժէ

եւ ես լարէդ բռնեմ :

Հիմա ետեւէն առջեւ

Օրուէ՛ , սիրուն գնտա՛կ .

Օրուէ՛ , օրուէ՛ , միշտ օրուէ՛ ,

եւ միշտ երջանիկ օրուէ՛ .

Հիմա ետեւէն առջեւ

Օրուէ՛ , սիրուն գնտակ :

Կըրր կըրր դարձի՛ր ,

Բայց գետինը մ՛ընկնի՛ր .

Քանի որ այսպէս կը դառնաս ,

Դու իմ շատ սիրելին ես .

Կըրր կըրր դարձի՛ր ,

Բայց գետինը մ՛ընկնի՛ր :

Ա՛լ խաղէն յողնեցար ,
 Այսօր մնաս բարեաւ .
 Քու պտուղիկ տանդ մէջ հանգչէ ,
 Մինչեւ որ ես նորէն կանչեմ՝ .
 Ա՛լ խաղէն յողնեցար ,
 Այսօր մնաս բարեաւ :

67. Մ Ա Ղ Յ Ա Ն Ք

Անուշ քունէն նոր ըսթափեր ,
 Երբոր բացուին մեր բերեր ,
 Խնդրենք այդուն հետ լուսաբեր ,
 Դու բարիք տուր մեզի , Տէ՛ր : (Կրկնէ՛ .)

Յորեկն , հացին հետ այն գողտրիկ ,
 Սընունդ համեղ , աղուորիկ ,
 Թո՛ղ կըշտանայ մերին փորիկ ,
 Դու բարիք տուր մեզի , Տէ՛ր : (Կրկնէ՛ .)

Գիշերն , երբ որ՝ յողնած , նըկուն ,
 Երթանք հանգչիլ ի խոր քուն ,
 Թո՛ղ մեզի խաչդ հըսկէ կանգուն ,
 Դու բարիք տուր մեզի , Տէ՛ր : (Կրկնէ՛ .)

68. Զ Բ Օ Ս Ա Ն Ք

Դուրս եկէ՛ք , դուրս եկէ՛ք ,
 Այնատանքը թող տուէ՛ք ,
 Խաղալով խնդալով
 Յնծութեամբ երգենք :

Լոյսը մեղմ՝ է եւ պայծառ ,
 Օդը զով , առողջարար ,
 Շուտ վազենք , ցատկուտենք ,
 Յնծութեամբ երգենք :

Միաբան , միաբան ,
 Ընկերները թող ըլլան .
 Հեռացո՛ւր դէմք տխուր ,
 Գործ ձգէ՛ եկո՛ւր :

Գառնուկին խաղը տես ,
 Մենք ի՞նչու չըլլանք այնպէս .
 Շուտ վազենք , ցատկուտենք ,
 Յնցութեամբ երգ ենք :

Գրեւու կարգալու
 Միշտ յարմար ատեն ըլլայ ,
 Խաղալու խնդալու
 Ժամանակը կայ :

Ո՛վ չուզեր գրել կարգալ ,
 Զկրնար հմուտ ըլլալ ,
 Շուտ վազենք , ցատկուտենք ,
 Յնծութեամբ երգենք :

69. Դ Ա Ր Բ Ն Ո Ց

Վարպետ ու աշկերտ կայնած դէմ՝ դէմի ,
 Կրակն են գըրեր ձողիկն երկաթի .
 Աշակերտն փո՛ւֆ , փո՛ւֆ , կը փչէ փըրոց ,
 Եւ վառարանէն կ'եղնէ ծուխ ու բոց :

Ծանր մուրճերով կարմիր երկաթէն
 Պէս պէս գործինքը շուտով կը կոփեն .
 Հոն՝ սալին վրայ՝ թաքը թիքը թաք՝
 կացին, բահ, բըրիչ, նաեւ գամ, ուրագ :
 Հո՛ն, տե՛ս, աչկերս մը բռնած է ձեռքին
 Յետանին վրայ՝ դեռ գուլ մի կացին ,
 Շուտ կը դարձնէ անիւը խրո խուռ ,
 Սըրերու համար գործիքն ամրակուռ :
 Հոն ալ ուրիշ մը՝ հաստ երկաթին քով՝
 Բրտինք կը թափէ ֆըշարով հեւքով .
 Կը զարնէ մուրճը անվերջ տանկա տանկ ,
 Աստուած վարձատրէ իր ճիգերն ու ջանք :

70. Յ Ա Ր Գ Ա Ն Ք

Տըղայք, աղջկուներ ըսելու չեն
 «Տուր ինձ որ հնազանդիմ» .
 Այդ չէ կերպն, երբ բան մը խնդրեն ,
 Բայց . «Թէ հաճիր, մայր իմ» :
 Ամէն մէկուն «եթէ հաճիր»
 Պարտին ըսել տըղայք .
 Եւ թէ արանց «Այո՛, տէր իմ» ,
 Կանանց՝ «Այո՛, տիկին» :
 Այսպէս տըղայք կ'ըլլան սիրուն ,
 Պատուոյ ալ արժանի ,
 Ամէնուն տէրը կը դրաւեն ,
 Կ'ըլլան յոյժ սիրելի :

Ուրեմն, տըղայք, ջանայէ՛ք միշտ
 Յարգել, սիրել, զամէնն ,
 Որոյ փոխան պիտ'ընգունիք
 Նոյնը զոր դուք ըրիք :

71. Բ Ա Ր Ո Վ Ե Կ Ա Յ Ք

Բարով եկայք . սըրտագին
 Տանք ձեզ բարեւ խըմբովին .
 Կըզգանք թէ դուք ամենքդ ալ,
 Ծանօթ, եղբայր, հայր կամ մայր,
 Սիրով մը մեծ՝ անսահման ,
 Կը գուրգուրաք մեր վրանն :

Բարով, հազար դուք բարով,
 Մեր սիրան ուրախ է ձեզմով :
 Կ'ուզէք որ մենք միշտ բարի ,
 Ըլլանք սրտով ալ բարի .
 Պարտիզիս մէջ ծաղկանց պէս ,
 Բուրեներ անուշ հոտ պէս պէս :

Բարով հազար դուք բարով,
 Մեր սիրան ուրախ է ձեզմով :
 Ո՛հ, ձեր սիրոյն փոխարէն ,
 Կուտանք բարեւ ձեզ նորէն :
 Բարով, հազար դուք բարով,
 Զերն ենք յաւէտ մենք հոգւով :

72. ՀԱԻՆ ՈՒ ՁԱԳԵՐԸ

Հաւն իր ձագերը առած,
Հաւնոցին մէջ նստած,
Իրեն սիրուն վառեակներ
Կըս կըս կ'ուզեն կեր:

Մայրիկն իսկոյն դուրս կ'երնէ,
Ասդին անդին վնասուէ
Պզտիկ հատեր դարիի,
Ձագերուն տանի:

Հաւն կըս կըս ձայնելով
Ձագերն կանչէ իրեն քով,
Եւ ուտելու յորդորէ,
Հատերն ցուցնելով:

Ձագերն տեսնեն իրենց մայր,
Վազեն քալեն վեր ու վար,
Կըս կըս կ'ուտեն այդ կուտեր,
Եւ սկսին երգել կըս, կըս, կըս:

73. ԵՐԳ ՄԵՂՈՒԻ

Մեղուն. — Ես մեղու մ'եմ փոքրիկ ժիր,
Ամբողջ օրը չեմ հանդչիր.
Հոս կը թռչիմ, հոն կ'ստանում,
Մէջ ծաղկանց ու մարգերուն:
Ձէք լրսեր դուք իմ բզզոց,
Ձը, զը, զը, զը . . . :

Խումբն. — Երբ զուարթ դարուն հասնի
Ու ծաղիկները բացուին,
Դուրս կ'երնես դու փեթակէդ
Որ ծաղկանց հելթը ծծես:
Կը լսենք մենք քու բզզոց,
Որ է միշտ զը, զը, զը:

Մեղուն. — Երբ առաւօտուն չորնայ ցօղ,
Թռչիմ զուարթ դաշտ ու ձոր,
Յանուշ ծաղկանց փոշիներ
Թաթխել մազոտ տոտիկներ:
Ձէք լրսեր դուք իմ բզզոց,
Ձը, զը, զը, զը . . . :

Խումբն. — Այդ քու մազոտ տոտիկներ
Ո՞րքան փոշի են ժողուեր.
Դարձեր կուգաս դու փեթակ
Որ է քո յարդէ տընակ:
Կը լսենք մենք քու բզզոց
Որ է միշտ զը, զը, զը:

Մեղուն. — Փեթակիս մէջ խիտա աղւոր
Բջիջ ունիմ բիւրաւոր,
Ուր բարեկիրթ ժիր մանկան
Մեղոր շինեմ պատուական:
Ձէք լրսեր դուք իմ բզզոց,
Ձը, զը, զը, զը . . . :

Խոււմբն . — Այդ փեթակիդ բջիջներ
 Մեզի համար ես շիներ ,
 Ուր երբ մեզը պատրաստես ,
 Բարի տղոց պարգեւես :
 Կը լսենք մենք քու բզզոց
 Որ է միշտ զը , զը , զը :

74. Զ Ո Ւ Ա Ր Թ Ա Ր Ե Ի

Մանուկն . — Զուարթ արեւ , բարի լոյս ,
 Ի՞նչպէս շուտ արթնցար .
 Լուսաւորներ տուած են խոյս ,
 Լուսինն ա՛լ չերեւնար .
 Երէկ ննջել դու կ'օրթայիր ,
 Կը խաղայի ես մինչդեռ .
 Այսօր ո՞ւրիկէ դարձեալ եկեր ,
 Ո՞ւր անցուցիր այս գիշեր :

Արեւ . — Միրուն մանկի՛կ , չեմ՝ քնանար ,
 Կը շրջիմ տեսներու
 Իմ մանկիկներ որ այլ աշխարհ
 Կ'ապրին՝ ձենէ հեռու .
 Կ'արթնցնեմ ես ծաղիկներ ,
 Եւ մեղու ու թռչուն ,
 Եւ վերջապէս այն մանկիկներ
 Որ երէկ ուշ եղան քուն :

75. Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ Ը

Պատուհանիս տակ անդորրիկ
 Ծիծառն եկաւ հիւսեց իր բոյն .
 Հակիթ ածեց փոքրիկ փոքրիկ ,
 Զագերն ելան որք օրն ողջոյն ,
 Մինչ յագեանայ իրենց փորիկ ,
 Զայնիւ մ'որ տայ խինդ ու հըրճիւ ,
 Կը ճըլլուըլան ճի՛ւ ճի՛ւ ճի՛ւ ճի՛ւ ճի՛ւ :

Երկինք ժպտի , բացուին վարդեր ,
 Կանանչ հագուին լեռ , ձոր ու ծառ ,
 Զագուկներուն համար՝ որդեր
 Ժողուէ աստ անդ մայրիկ ծիծառ .
 Կըտուցներէ բաց , նօթի դեռ ,
 Ճիչ մ'անդադար դուրս կը թափի ,
 Բի՛ , բի՛ , բի՛ , բի՛ , բի՛ , բի՛ , բի՛ , բի՛ :

Վարժարանն է մեր բոյնն աղուոր ,
 Ուր , թռչնոյ պէս , երգ ու պարով
 Մեր օրերը կ'անցնին բոլոր ,
 Ուրախ , զըւարթ , սիրազորով :
 Երգե՛նք ուրեմն , անհագ , անդորր ,
 Մեր երգն Աստուած լըսել հաճի ,
 Ճի՛ , ճի՛ , ճի՛ , ճի՛ , ճի՛ , ճի՛ , ճի՛ , ճի՛ :

76. Ե Ր Կ Ա Յ Ո Ւ Ղ Ի

Հա՛, կը սուլէ ճեպընթաց,
 Երթի ժամն է հասած,
 Չո՛ւհ, չո՛ւհ, չո՛ւհ, չո՛ւհ, չո՛ւհ, չո՛ւհ.
 Ի կայարան վազենք շուտ,
 Ձերերանք հոս անփոյթ,
 Չուհ, չուհ, չհ, չհ, չհ, չհ, չուհ:

Թող ամէնքն արդ տեղ առնուն,
 Ձի, հազա՛ր փառք շողոյն,
 Չուհ, չուհ, չուհ,
 Տի կարենք մեծ առպարէ՛ղ՝
 Թեւաւոր թռչնոյ պէս,
 Չուհ, չուհ, չուհ:

Մեր շողեկառքն՝ իր կուշտէն
 Սեփ սեւ մուխ ժայթքելէն,
 Չուհ, չուհ, չուհ,
 Կը փոշոտէ ձախ ու աջ,
 Կը սուրայ միշտ յառաջ,
 Չուհ, չուհ, չուհ:

Հոս՝ անհամար դաշտեր լայն
 Ծառ՝ ծաղկունք կ'երեւնան,
 Չուհ, չուհ, չուհ,
 Սա՛ ներքնուղի մ'է խաւար,
 Ո՛հ, բնաւ չենք վախնար,
 Չուհ, չուհ, չուհ:

Բայց կը հասնինք աւասիկ,
 Կ'երթայ գնացքն մեղմիկ,
 Չուհ, չուհ, չուհ,
 Ու շողեկառքն ալ հիմայ
 Քիչ մ'անդին կը կենայ,
 Չուհ, չուհ, չուհ:

77. Շ Ր Ջ Ա Ն Ա Կ Կ Ա Ջ Մ Ե Լ

Շրջանակ մը կազմենք, տըղա՛ք,
 Գըտէք ձեր տեղ, պիտի խաղանք.
 Ձեռքերնիդ, օ՛ն, վեր բըռնեցէ՛ք,
 Երբ ծափ զարնեմ, դուք վազեցէ՛ք,
 Ձիս բըռնեցէ՛ք, եթէ կըրնար: (Կրկնէ՛.)

Անճարակը մնաց դուրսը,
 Եւ ճարպիկը բըռնեց տեղը.
 Թո՛ղ իմ ընկերք լաւ ուշ դնեն,
 Որ չըլլայ թէ չըջանակէն
 Շուտով զիրենք ալ դուրս ձրգեն: (Կրկնէ՛.)

78. Պ Տ Ո Ւ Ղ Ս Ի Ր Ո Ղ Ը

Ես մանչ մըն եմ գեղադէմ,
 Կարդալ գըրել քիչ գիտեմ.
 Բայց շատ սիրեմ չաքար նուշ,
 Ու խաղողին համն անուշ:

Եթէ ունիք, հաճեցէ՛ք,
Ինձ ալ բաժին հանեցէ՛ք.
Ձանոնք կ'ուտեմ ես չափով,
Ո՛չ անկիրթի պէս ափով:

79. ՊՂՆԶԱԳՈՐԾՆ ԵՒ ԵՐԿԱԹԱԳՈՐԾԸ

Կ'ուզէ՛ք երգել ու չափ տալ,
Լաւ բացէ՛ք ձեր ականջներ,
Որ ըզզաք միշտ անսրխալ
Ձայնիւ թեթեւ ալիքներ:
Պղնձագործն իր մուրճով
Ծեծէ պղինձ անլըրդով,
Դիբ դաբ, դիբ դաբ, դիբ դաբ,
Փողոցն ի վար մեր գիւղին
Երբ որ երթաք՝ կ'իմանաք
Կուռ հարուածներ մեծ մուրճին
Որ կը ծեծէ երկաթ տաք.
Տեսէ՛ք, ցայտեն հուր կայծեր,
Ու կը հրնչեն հարուածներ,
Դինկ դանկ, դինկ դանկ, դինկ դանկ,
Դինկ դանկ:

80. ՄԱՏՆԵՐՈՒ ԵՐԳ

Ի՛թամատր կ'ըսէ պարեմ,
Ի՛թամատր կ'ըսէ ցատկեմ:
— Պարէ, ցատկէ՛, ո՛վ դու բ՛թամատ:

Յուցամատր կ'ըսէ պարեմ,
Յուցամատր կ'ըսէ ցատկեմ:
— Պարէ, ցատկէ՛, ո՛վ դու ցուցամատ:

Միջնամատր կ'ըսէ պարեմ,
Միջնամատր կ'ըսէ ցատկեմ:
— Պարէ՛, ցատկէ՛, ո՛վ դու միջնամատ:

Մատնամատր կ'ըսէ պարեմ,
Մատնամատր կ'ըսէ ցատկեմ:
— Պարէ՛, ցատկէ՛, ո՛վ դու մատնամատ:

Ճկոյթը կ'ըսէ. ես ալ կը պարեմ,
Ճկոյթը կ'ըսէ. ես ալ կը ցատկեմ:

Ամէնքս ալ կը պարենք,
Ամէնքս ալ կը ցատկենք:
Պարել ցատկել, ո՛հ, մեղ համար է: (Կրկնե՛.)

81. ԱՂՈՒԷՍԻ ՈՒՐԻՇ ԵՐԳ

Կը քրնէ աղուէս պարոնըն մինակուկ,
Բայց արնկէ գլուխն՝ երբ կը լաւի շշուկ:
Ո՛վ պղտիկ վառեակ, աղտորիկ դո՛ւ ձագուկ,
Ալ թո՛ղ վերջապէս քո բոյնը տաքուկ,
Նօթի է աղուէս, նօթի է աղուէս:

Կը հաւտամ, կ'ըսէ, որ այդ քու հասակաւ,
 ճամբորդելու վախ չի զգար մարդ բնաւ.
 Եկուր զիս տեսնել, եկուր դու շտապաւ,
 Ե՛կ անմիջապէս: Խօսք կուտայ մէկ հաւ.
 «Կուգամ, տէր աղուէ՛ս, կուգամ, տէր աղուէ՛ս»:

Պզտիկ վառեակըն չունի երկիւղ արդէն,
 Պզտիկ վառեակն է անհոգ ու անխոհեմ.
 Շուտ կուգայ առաջ, հըպարտ, անխելքօրէն,
 Եւ աղուէսն իսկոյն վրան ցատկերէն
 Զայն կ'ընէ նկուն, զայն կ'ընէ նկուն:
 Մեր աղուէս պարօնն չեղաւ վարպետորդի,
 Զի կրցաւ բռնել մեր ձագուկն անի:
 Թո՛ղ պզտիկ վառեակն իր բոյնին մէջ հանդչի,
 Եւ կարծեն որ ան պիտի հեզ լինի
 Մի ուրիշ անգամ, մի ուրիշ անգամ:

82. ՅԵՍԱՆՈՂ (ԽԱՂ)

Յեսանողն եմ. կ'երթամ քաղքէ ի քաղաք,
 Շուտ կտրելով շէն եւ աւան եւ գիւղակ.
 Ճամբուն վրայ կոնակս առած եմ յեսան,
 Գոչեմ. մկրատ՝ դանակ սրեմ խիստ աժան:
 Թէ հով փչէ, թէ գայ անձրեւ,
 Միշտ երջանիկ, գո՛հ արդարեւ,
 Կեանքս անցնեմ զուարթօրէն,
 Երգով սահին օրերս ամէն:

Դարձիր արագ, գործօ՛ն յեսանս.
 Դու միակ ինչքս ու օգնականս,
 Քեզմով առատ հաց ճարեմ ես.
 Դու յոյս՝ ծիծաղ ինձ պարգեւես:

83. ՀԻՆԳ ՊԱՐՈՆՆԵՐ (ԽԱՂ)

Հինգ պարօններ դէպ ի դըղեակ
 Ճամբայ կ'առնեն արագ արագ.
 Պատըգամէն Տիկին մ'աղնիւ
 Կը հարցնէ անոնց մեղմիւ.
 «Հոս դըղեակիս իմ բողբոսիք
 Ի՞նչ կը փնտուէք, ժիր պատանիք»:

Մենք կը փնտուենք քու տրղայդ հեզ
 Որ խելօք է գառնուկի պէս.
 Հրեշտակն այս տան ահա՛ ժպտուն,
 Արժանի է նա ձեր սիրոյն:
 Օրհնեա՛լ ըլլաս, զաւակ ազնիւ,
 Մօրդ միակ փառքն ու պատիւ,
 Սէր՝ յաջողուածք՝ բարիք ամէն
 Քեզ պէս տղոց լոկ բաժինն են.
 Մենք ի դարձին, սիրուն որդեա՛կ, քեզ համար
 Պիտի բերենք խաղալիքներ անհամար:
 Մենք ի դարձին, սիրուն որդեա՛կ, քեզ համար
 Պիտի բերենք խաղալիքներ անհամար:

84. Մ Ա Ր Մ Ն Ա Մ Ա Ր Ձ

- Ա. Ձեռ. — Տեաներով լուսընկան
 Որ կը փայլի վերը,
 Ես կ'առնեմ գրքիչս,
 Գրքեմ սա բառեր.
 «Ո՛վ փայլուն լուսընկայ,
 Դէպ ի Տէր Աստուած
 Վեր հանես, վեր, իմ սիրտ.
 Փայլէ՛ միշտ այս տեղ:»
- Բ. Ձեռ. — Գիշեր բարի, գիշեր բարի.
 Հովուին լոյսը, տե՛ս, փայլի,
 Գիշեր բարի, գիշեր բարի,
 Հովուին լոյսը, տե՛ս, փայլի:
 Հիմա հանգարա է մեր չորս դին,
 Կը շրջինք մենք դիւրին դիւրին,
 Ձի կայ չըսուկ, ի կայ աղմուկ,
 Քրնանայ ամէն մանուկ:
- Գ. Ձեռ. — Դարձրնենք մեր գրչուիններ
 Աջ ձախ, աջ ձախ, նորէն աջ ու ձախ,
 Ուժով երգենք, ընկերներ,
 Մեր սրտերէն, օ՛ն, հանենք վախ,
 Գրչուխ շարժենք աջ ձախ, աջ ձախ:

- Դ. Ձեռ. — Ըլլանք մարութ շնորհա՛լի,
 Շատ մարութ, մա՛ս մարութ,
 Ըլլանք մարութ շնորհա՛լի,
 Ահա՛ ջուր, ահա՛ ջուր:
 Լուանք մեր ձեռք ու երես,
 Աճառենք, ջուր թափենք,
 Մարբենք զանոնք ձիւնի պէս,
 Ձուր առնենք թափենք:
- Ե. Ձեռ. — Բարի լոյս ձեզ, բարեկամ,
 Բարի եկարք մեր տուն.
 Ի՛նչպէս են ձեր պատուական
 Քոյր ու եղբայր, մայր խաթուն:
 Կարօտցանք ձեզ ամէնքլս,
 Հրամմեցէ՛ք, նրսանցէ՛ք.
 Երթամ կանչեմ՝ մայրիկըս,
 Անոր հեա խօսեցէ՛ք:
- Զ. Ձեռ. — Ազուր հա՛յրիկ,
 Այսօր տօնն է անունիդ.
 Ո՛րչափ կ'ուզէի որ հոս ըլլայիր.
 Ծաղիկներ ունիմ՝ առջիդ ցանելու,
 Եւ համրոյրներ շատ՝ տալու երեսիդ,
 Ազուր հայրի՛կ, սիրուն հայրի՛կ:
- Է. Ձեռ. — Մայրի՛կ, մայրի՛կ, շատ կ'աղաչեմ քեզ,
 Ըսէ՛, ի՛նչով փոխարինեմ՝ ես,
 Այսքան սէր խընամք զոր միշտ կուտաս դ՛ու,
 Այսքան աշխատանք զոր ընել փութաս:

Ը. Ձեռ. — Ծուլութիւն չընենք,
 Շուտ շուտ ըշտապենք.
 Դառնանք ասդին,
 Մէյ մ'ալ անդին:
 Երգերով դառնանք
 Եւ ուրախ ըլլանք.
 Երգենք ուրախ,
 Ուրախ ուրախ:

Թ. Ձեռ. — Մարուր օգին մէջ կը խաղանք.
 Փոշիտ օգ չենք շընչեր մենք,
 Փոշին մէջ հիւանդ կ'ըլլանք,
 Բանանք փեղկեր, փոշին վանենք:
 Մարուր օգը մեզի կուտայ
 Կարմիր երես, առատ արիւն.
 Բանանք փեղկեր, թո՛ղ օգներս գայ,
 Մեզի տալու առողջութիւն:

Ժ. Ձեռ. — Ահա՛ կուգայ
 Ձի մը կարմիր.
 Ինչպէ՛ս արագ
 Կը քայլէ ան դէպ ի մեզ.
 Այսպէս այսպէս
 Կը քայլէ ան,
 Մէյ մը դէպ առաջ, մէյ մ'ալ դէպ ի վեր:

85. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՆԵՐԸ (ԽԱՂ)

Խումբը՝ Բոյորշի կազմերով. —

Վազեցէ՛ք շուտ, փող ու ծընծղայք,
 Սըրինգ, տաւիղ, շեփորայ,
 Աւագափող, փանդեռ, թըմբուկ,
 Խըմբովին հոս եկէ՛ք դուք,
 Գալարափողք, քընար ու տիկ,
 Օ՛ն, երգեցէ՛ք, երգ անուշիկ,
 Ճիկ, շիկ.

Օ՛, օ՛, օ՛, օ՛,

Ա՛, ա՛, ա՛, ա՛,

Ի՛նչ գեղեցիկ հանդէս մ'է սա,
 Լա, լա, լա, լա:

Թմբուկ. — Կոչունքի մէջ թէ որ տամ ձայն,
 Բոլոր տընւորք քովս գան.
 Մեծ եւ պզտիկ խաղան՝ պարեն,
 Մինչ ձայն ուժգին արձակեմ.
 Ու պարն ամբողջ ժիր՝ եռանդուն՝
 Կ'երթայ յառաջ միշտ անդադրում,
 Պո՛ւմ, պո՛ւմ:

Խումբը. — Օ՛, օ՛, օ՛, օ՛.

Ա՛, ա՛, ա՛, ա՛:

Լաւ թմբկահար մ'է իրաւ սա:

Գալարափող. — Կը դըղըրդեմ լեռ եւ պուրակ,
 Երբ կատողի շանց վահմակ
 Երէն քըչէ հալածական,
 Լատիլիզերու համար զայն.
 Բայց սրահներու մէջ՝ կամովին
 Երգերու կարգս տամ ջութակին,
 Լին, լին:

Խոււմբը. — Օ՛, օ՛, օ՛, օ՛,
 Ա՛, ա՛, ա՛, ա՛,
 Իրա՛ւ, շատ քաջ օրսորդ մ'է սա:

Հովուական սիկ. — Գիւղակին մէջ՝ անոյշ ձայնէս
 Ամէնքն ուրախ են կարծես,
 Տիկիս զուարթ եղանակէն
 Մանչ եւ աղջիկ կը կայտուեն,
 Երբ կնձնոյն տակ՝ ամառն ի բուն
 Պար բռնել տամ գեղջուկներուն,
 Ո՛ւն, ո՛ւն:

Խոււմբը. — Օ՛, օ՛, օ՛, օ՛:
 Ա՛, ա՛, ա՛, ա՛.
 Իրա՛ւ, սիրուն պարող մ'է սա:

Սրիւնգ. — Չայն մ'ունիմ ես ըզգացմամբ լի՝
 Քաղցրահնչիւն՝ կենդանի,
 Մեղամաղձիկ կ'երգեմ յաճախ՝
 Աղիտորմ վէպ կամ տաղ,
 Իսկ մերթ երգս է այնքա՛ն աղու,
 Ուրկէ նախանձ սոխակն առնու,
 Հո՛ւ, Հո՛ւ:

Խոււմբը. — Օ՛, օ՛, օ՛, օ՛,
 Ա՛, ա՛, ա՛, ա՛,
 Իրա՛ւ, անուշ սրինգ մ'է սա:

Ջութակ. — Նըւագածու մ'ունիմ ինձ աէր
 Մարդաց վերայ տամ պարել.
 Բայց երբ ճարտարը դիս ձեռք առնուն,
 Չայնս է վրտեմ զգայուն.
 Թրթռայ՝ դողայ ձայնս յիրաւի,
 Երբ զայն վարէ Բակասիկի, Լ՛, Լ՛:

Խոււմբը. — Օ՛, օ՛, օ՛, օ՛,
 Ա՛, ա՛, ա՛, ա՛,
 Նուագածու մ'է ճարտար սա:

Խոււմբը՝ Ունկնախից. —
 Ի՛նչ նուագ խօլ՝ աններդաշնակ,
 Տէր, կը տիրէ հոս համակ,
 Թէ խառն ի խուռն երգէք դուք յար,
 Չենք հասկընար մենք զիրար:
 Չայնակցեցէ՛ք ամէնքդ, հապօ՛ն,
 Երգեցէ՛ք մեզ անոյշ գեղօն,
 Դո՛ն, զոն:
 Օ՛, օ՛, օ՛, օ՛,
 Ա՛, ա՛, ա՛, ա՛,
 Իրաւ, սաստիկ ժխոր մ'է սա:

Ջութակը՝ միս Լուսաբարաններուն ուղղելով խօսքը. —
 Նուագարաննե՛ր, բարեկամնե՛րս, մեզի դէմ

եղած մեղադրանքը շատ էրաւացի է: Պէտք է որ անպատճառ ձայնակցինք և ընտրենք մեր մէջէն զայն որ ամենէն աւելի կարողն է ներդաշնակ ընելու մեր երգերն:

Ամենք. — Ա.յո', այո':

Մերնքը միաններուն. — Լա՛ւ ուրեմն, ընտրենք ջութակը, քանզի անիկայ միայն լաւ կը հասկնայ թէ ի՞նչ պէտք է ընել:

Բոլոր նուագարանները խումբին. — Ա.յո', ջութակը, ջութակը, թո՛ղ մեր գլուխը անցնի:

(Ձուրակի դերն ստանձնող երգիչը, գոր կանխաւ ընտրած եւ տղայք եւ շաւ երգողներուն մեջեւ, կ'երգէ եղանակն այնքան շաւ որքան կարելի է իրեն):

Բոլոր նուագարանները խումբին. —

Մեր ներդաշնակ գեղգեղանքէն,
Ընկե՛րք, գո՛հ է՞ք ապաքէն:

Խումբը կը պատասխանէ. —

Ա.յո', զի արդ ձեր գեղգեղանք
Դաշնակաւոր է համակ:

9. ՏԵՂԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Պոչոյ եւ շրջակայից. Միջին դասընթացի համար. Բ. սիւք բարեփոխում եւ անխաղած (Հրատարակելի)

10. ՀԱՄՐ ԱՇԽԱՐՀԱՅՈՅՅԵՐ, Աշխարհագրութեան եւ դասերու վարժութեանց համար. հասը 10 փարս. 100 հասը 20 Ղրշ.

11. ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ԹՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ, Պատկերազարդ. Մանկապարտեզներու, Ծաղկոցներու եւ Նախապատրաստական կարգերու համար 3 Ղրշ.

12. ԹՈՒԱԳԻՏ. Տարր. Դասընթացք Ա. սարի 3 »

13. » » » Բ. » 3 »

14. » Միջին Դասընթացք Գ. » 4 »

15. » » » Դ. » 4 »

16. » Բարձր. » Ե. եւ Զ. » 10 »

17. » Ընդարձակ. սեռական եւ գործն. 15 »

18. ԱՐՈՒԵՍՏ ՏՈՄԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ եւ Վաճառականական Գիտելիք. Պարզ տուար եւ Կրկնատուար: Ամեն մարդ կարող է ինքն իրեն ստովիլ կարճ ժամանակի մեջ: Վարժարանաց համար յարմարագոյն դասագիրքն է իւր համառոտութեանը, պարզութեանը եւ դիւրեւոյց մեթոտովը 6 Ղրշ.

19. ՆԱԽԱՏԱՐԵՐԲ Գործնական Երկրաչափութեան եւ Գծագիտութեան. Տարրական եւ Միջին Դասընթացք. 125 պատկերներով 3 Ղրշ.

20. ՏԱՐԵՐԲ Գործնական Երկրաչափութեան. Բարձր. Դասընթացք Ա. սարի. 246 պատկերով 6 Ղրշ.

21. ՏԱՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆԻ ԳՐԱՀԱՇՈՒՈՅ. Թուրքականական խնդրոց լուծմանը համար կիրարկում. Պարզ բացատրութիւններով 3 Ղրշ.

22. ՆՈՅՆԻՆ ԲԱՆԱԼԻՆ ի պէս Ուսուցչաց. կը պարունակէ Աշակերտաց Գրքին բոլոր հրահանգաց եւ խնդրոց լուծումները 3 Ղրշ.

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ՄԱՏԻՆՆԵՐԻՆԻ

ԵՐԳԱՐԱՆՆԸ. Հաւաճածոյ Մանկապարտիզի Երգե-
րու. Դասագիրք Ընթերցանութեան՝ Մանկա-
պարտեզներու, Ծաղկոցներու, Նախապատ-
րասական կարգերու եւ Տարրական Դասըն-
թացքի համար 3 Դր.

ԱՇԵԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆՆԸ, Պատկերազարդ. Յաս-
կազմերով եւ Աւսարհացոյցերով: Մանկա-
պարտեզ-Ծաղկոցներու, Նախապատրաստական
կարգերու եւ Տարրական Դասընթացքի Ա. տար-
ւոյ համար 2 1/2 Դր.

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԸ, Պատկերազարդ. Մանկա-
պարտեզ-Ծաղկոցներու, եւ Նախապատրաստա-
կան կարգերու համար 3 Դր.

Հեղինակին միւս գրքերուն ցանկը տես գրքի
ներքին կողմերուն վրայ:

Մեծաճանակ գնողներուն գոհացուցիչ զեղչ:

ԳԻՆ ԼՐՈՒՇ